*Արեստակես Սիմավորյան*
*Վահրամ Հովյան*

# ՋԱՎԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

*Ջավախահայության դավանանքային և տեղեկատվական վիճակի ուսումնասիրություն*

Երևան
2009

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ջ 360

*Գիրքը հրատարակվում է ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով, «Նորավանք» ԳԿՀ փորձագիտական խորհրդի որոշման հիման վրա*

Ջ 360 Ջավախահայության որոշ հիմնախնդիրներ - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2009. - 96 էջ + ներդիր 2 էջ:

Ուսումնասիրությունը նվիրված է Ջավախքի հայ կաթոլիկ գյուղական համայնքների անցյալին և ներկա խնդիրներին՝ ընդգրկելով պամության և հոգևոր-եկեղեցական ոլորտները: Շոշափվում են հայերի կաթոլիկացման պատճառները, համայնքների ձևավորման գործընթացը, հայ կաթոլիկների նկատմամբ իրականացված վրացականացման քաղաքականությունը: Անդրադարձ է կատարվում Հայ Առաքելական և Հայ Կաթոլիկ եկեղեցիների հետևորդների փոխհարաբերություններին, Հայ Կաթոլիկ եկեղեցու իրավական կարգավիճակի և դրանից բխող այլ խնդիրներին:

Հետազոտությունը հիմնված է առկա գրականության ուսումնասիրության և դաշտային աշխատանքների արդյունքների վրա:

Գիրքը նախատեսված է փորձագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2009
© «Նորավանք» ԳԿՀ, 2009

ISBN 978-9939-9000-6-3

# ՋԱՎԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՎԱՆԱՆՔԱՅԻՆ ՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

*Արեստակես Սիմավորյան*

## *Առաջաբան*

Հայ իրականության մեջ հզոր, ազգապահպան մեծ նշանակություն ունեցող Հայ Առաքելական եկեղեցու կողքին այսօր գիտական և փորձագիտական շրջանակներում զգալի տեղ է տրվում այլ դավանանքի ու կրոնի հարողների խնդրին: Այս առումով ուսումնասիրություններ են կատարվում նաև XVIII-XXդդ. հայ կաթոլիկ համայնքների վերաբերյալ, որոնք, որպես Հռոմեական կաթոլիկ եկեղեցու՝ ուշ միջնադարում դեպի արևելք ծավալվելու քաղաքականության հետևանք, միևնույն ժամանակ ազգային դիմագծի պահպանման առումով կրել են ազգանպաստ մեծ գործ կատարած Մխիթարյան միաբանության ավանդույթները: Նրանց դերը ևս կարևոր է Հայության առջև ծառացած խնդիրների լուծման գործում՝ ազգապահպան լծակների ամրագրմամբ: Հայտնի է, թե ինչ ծանր հետևանքներ ունեցավ, օրինակ՝ Լեհաստան, Ռումինիա, Հունգարիա գաղթած հայերի կաթոլիկացումը, ինչը հանգեցրեց նրանց մեծ մասի ձուլմանը:

Դավանանքային տարբերությունը չպետք է խաթարի ազգային պատկանելության ընկալումը՝ համազգային խնդիրներ լուծելու հրամայականով: Անհրաժեշտ է ուսումնասիրել և փոր-

ձել գտնել, թե ինչ նմանությունների հիման վրա են կառուցված դավանանքով տարբեր, բայց նույնէթնիկ և համանման քրիստոնեական արժեհամակարգ ունեցող հատվածները:

Այդ նպատակով փորձել ենք ներկայացնել Ջավախքի՝ Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջանների հայ կաթոլիկ գյուղերի այսօրվա հոգևոր-եկեղեցական, փոխադարձ ընկալման և բազմաշերտ այլ հիմնահարցեր: Ջավախքի հայ կաթոլիկների թեման պատահականորեն չենք ընտրել, քանի որ վերջիններս հայապահպանման տեսանկյունից ինքնատիպ են և օրինակելի մյուս հայ կաթոլիկ համայնքների համար:

Անհրաժեշտ ենք համարել օգտվել հայ կաթոլիկների վերաբերյալ պատմագիտական ուսումնասիրություններից, համացանցից: Ջավախքի և, մասնավորապես, հայ կաթոլիկների հետ ունեցած անձնական կապերը հնարավորություն են տվել ռեալ պատկերացնել վերջիններիս շրջանում տեղի ունեցող գործընթացները: Աշխատանքում ներառվել է նաև 2009թ. հունիսին Ջավախքի հայ կաթոլիկ գյուղական համայնքներում (Տուրցխ, Ալաստան, Վարևան, Խուլգումո, Հեշտիա, Թորիա, Ուջմանա) «Նորավանք» ԳԿՀ փորձագետների կատարած դաշտային հետազոտությունների նյութը:

## *Պատմական ակնարկ*

«Մեր աղոթքը նույնն է, նույնն են մեր պայքարը, վտանգները...»:

*Անդրանիկ վրդ. Կռանյան*

Հայոց կյանքի ամենակարևոր հենարաններից մեկը դարերի ընթացքում եղել է Հայ Առաքելական եկեղեցին՝ հայ ժողովրդի ազգային հոգևոր կառույցը: Սակայն ցավալի պատմական իրողություն է նաև այն, որ տարբեր ժամանակաշրջաններում հայ ժողովրդին պարտադրվել է դավանափոխ լինել:

Այդպիսի օրինակ է Հռոմեական կաթոլիկ եկեղեցու քաղաքականությունը Հայաստանի և Հայության նկատմամբ: Հայերի մեջ կաթոլիկ միսիոներների քարոզչական գործունեությունը սկսեց ծավալվել դեռևս Կիլիկյան Հայկական թագավորության (1198-1375թթ.) սահմաններում, XIIIդ. վերջին և XIVդ. առաջին կեսին՝ շրջակա մահմեդական իշխանությունների ասպատակությունների հաճախացման շրջանում: Արևմուտքը, տալով սին խոստումներ, օգնության նախապայման էր համարել Հռոմի պապի գերիշխանության ճանաչումը, կաթոլիկ եկեղեցու ծեսի ու դավանանքի ընդունումը: Կիլիկյան Հայկական թագավորության Սիս մայրաքաղաքում 1361թ. տեղի ունեցած եկեղեցական ժողովը մերժեց Հռոմեական կաթոլիկ եկեղեցու հետ միությունը (ունիա)[1]: *Ունիթորներին* (լատ. *unitores*-միացողների, միաբանողների եղբայրություն) Հայաստանում անվանում էին «ծայր», «աղթարմա», «փռանկ» և այլն[2]: Իսկ Հռոմեական կաթոլիկ եկեղեցու հետ միությունը մերժողներին անվանում էին *հակաունիթորներ*:

[1] Քրիստոնյա Հայաստան, Երևան, 2002, էջ 727:

[2] *Արոյան Ս.,* Համառոտ պատմութիւն Հայ Կաթողիկէ (կաթոլիկ) Եկեղեցու, 2002, http://www.armeniancatholic.ru/pdf/armchurch.pdf:

Ունիթորները, կուրորեն ընդունելով լատինական եկեղեցու դոգմաներն ու ծեսերը, փորձում էին դրանք տարածել Հայաստանում: Նրանք սկսեցին հերետիկոս համարել ամբողջ հայ ազգը, արհամարհել Հայ եկեղեցու ծեսերն ու դարավոր ավանդույթները, այդ պատճառով նրանք շուտով չքացան պատմության ասպարեզից[1]:

Դավանափոխությունն իր հետ բերեց բացասական երևույթներ: Բուն Հայաստանից և Կիլիկիայից արտագաղթած հայ կաթոլիկները ժամանակի ընթացքում Եվրոպայի մի շարք երկրներում ձուլվեցին ազգերին, իսկ տեղում մնացածների զգալի մասն ընդունեց մահմեդականություն[2]:

1622թ. Գրիգոր 15-րդ պապի որոշումով հիմնվեց «Հավատի պրոպագանդայի Սուրբ միաբանությունը», որը նպատակ էր հետապնդում կաթոլիկություն տարածել արևելքում և, մասնավորապես, Հայաստանում: Պապի ընդունած որոշման հետևանքով, 17-րդ դարի երկրորդ կեսին, Հայաստանում միսիոներական լայնածավալ և ակտիվ գործունեությամբ աչքի ընկան ֆրանցիսկյան, կարմելյան, օգոստոսյան և մի շարք այլ կաթոլիկ վանական կարգեր[3]:

---

[1] Նույն տեղում:

[2] Քրիստոնյա Հայաստան, էջ 728:

[3] Հատկանշական է, որ Հռոմի կաթոլիկ եկեղեցին 17-18-րդ դարերում հայերին կաթոլիկացնելու վտանգավոր փորձեր է կատարել նաև Իրանում, մասնավորապես՝ Նոր Ջուղայում և այլ շրջաններում: Ա.Այվազյանը, հետազոտելով այս խնդիրը, ուշադրություն է հրավիրել 1680թ. Բասրայում (քաղաք մերօրյա Իրաքի հարավում) տեղի մեկուսի հայկական համայնքը կաթոլիկացնելու ուղղությամբ կարմելիտների գործադրած մեծ ջանքերի վրա, որոնց հակահարված էր տվել այնտեղ ժամանած Հայ Առաքելական եկեղեցու քահանա Առաքելը և խափանել էր նրանց ծրագրերը: Հետազոտողը նշում է, որ Առաքել քահանան հայերին կաթոլիկացնելու դեմ որպես կարգախոս էր օգտագործել դեռևս 13-րդ դարում Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի (Պատմութիւն նահանգին Սիսական. Թիֆլիս, 1910, էջ 459) դաջած հատու գաղափարական բանաձևումը. «*Եւ ընդէ՞ր է երկայնել մեզ զբանս. հաւան եմք մեք ընդ մեր հարսն ի դժոխս իջանել, եւ ոչ ընդ Հոռոմոց յերկինս ելանել*» (*Արմեն Այվազյան,* «Կարմելիտների ժամանակագրությունը» որպես Հայոց պատմության աղբյուր (17-18-րդ դարեր), http://www.hayinfo.am/am/analytics/policy/39477.html:

Օգտվելով այն հանգամանքից, որ Հայությունը գտնվում էր թուրքական և պարսկական ծանր լծի տակ, կաթոլիկ քարոզիչները քրիստոնյա ժողովրդի մեջ սկսեցին տարածել կաթոլիկ դավանանքը: Կաթոլիկություն ընդունեցին այն գյուղերի կամ բնակավայրերի բնակիչները, որոնք, շրջապատված լինելով թուրք և քուրդ հրոսակախմբերով, կանգնած էին երկընտրանքի առջև՝ կամ բնաջնջվել ֆիզիկապես, կամ թուրքանալ և իսլամանալ[1]:

Անշուշտ, դավանափոխ հայերն այդ կերպ փորձում էին գտնել Հռոմեական կաթոլիկ եկեղեցու պաշտպանությունը: Կաթոլիկ քարոզիչների նպատակն, իհարկե, հայ ժողովրդին թուրքական սպառնալիքից փրկելը չէր, այն ուներ ավելի խորքային, Վատիկանի համար, թերևս, քաղաքական պատճառներ: Կաթոլիկության տարածմամբ, ի թիվս այլ պետությունների, շահագրգռված են եղել նաև Ֆրանսիան և Իտալիան, որոնք քարոզիչների միջոցով փորձել են տարածել իրենց ազդեցությունը[2]:

Հռոմեական կաթոլիկ եկեղեցու աշխարհածավալ քաղաքականության հետևանքով հայկական կաթոլիկ համայնքներ էին առաջացել Արևմտյան Հայաստանում՝ Կարնո գավառում և Արդահանում, որտեղից էլ, պատմական հանգամանքների բերումով, Հայ Առաքելական եկեղեցու զավակների հետ միասին Ջավախք էին տեղափոխվել նաև հայ կաթոլիկները:

Գուգարաց նահանգի գավառներից՝ Ջավախքը հնուց եղել է Հայոց աշխարհի հյուսիսային պատվարը: Հայոց կյանքում ազգապահպան կարևորագույն նշանակություն ունեցող Հայ Առաքելա-

[1] *Արոյան Ս.,* նշվ. աշխ.:
[2] ՀՍՀ, Երևան, 1979, h. 5, էջ 162:

կան եկեղեցու նվիրապետության հյուսիսային մասում գտնվելով՝ Ջավախքը հարուստ ռազմաքաղաքական, հոգևոր և նյութական մշակութային ներդրում ունի Հայոց պատմության մեջ:

1828թ. ապրիլին սկսված ռուս-թուրքական պատերազմն ավարտվեց Ադրիանապոլսի հաշտության պայմանագրով (1829թ. սեպտեմբերի 2), որով Ռուսական կայսրությանն անցան Ախալցխա, Ախալքալաք քաղաքները[1]:

Լավ հասկանալով, որ ռուսական զորքերի՝ Արևմտյան Հայաստանի գրավված մյուս գավառներից (որոնց թվում էր նաև Էրզրում քաղաքը) հեռանալուց հետո օսմանյան լծի տակ հայտնված հայության վիճակը դառնալու էր օրհասական, 1829թ. դեկտեմբերի 15-ին Կարապետ արքեպիսկոպոսը և 25 այլ մեծամեծներ պաշտոնական նամակով դիմում են Պասկևիչին՝ խնդրելով իրենց թույլատրել ռուսական զորքերի հետ հեռանալ Ռուսաստանին անցած տիրույթներ[2]:

Իսկ Էրզրումի և շրջակա գավառների հայ կաթոլիկների գաղթի կազմակերպումը ստանձնեց Մխիթարյան վարդապետ Եփրեմ Սեթը (Սեթյան): Վերջինս և մի շարք վարդապետներ, ավագների հետ միասին, մի խնդրագիր են ուղարկում գեներալ Ն.Պ. Պանկրատևին՝ ռուսական սահմաններ տեղափոխվելու վերաբերյալ[3]:

[1] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, պրոֆ. Ջ.Կիրակոսյանի խմբագրությամբ, կազմողներ՝ Ջ.Կիրակոսյան, Ռ.Սահակյան, Երևան, 1972, էջ 75:

[2] *Մելքոնյան Ա.,* Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդում, Երևան, 2003, էջ 184:

[3] *Կարապետյան Մ.,* Եփրեմ Սեթը արևմտահայության 1829-1830թթ. գաղթի մասին, ՊԲՀ, 1997, թիվ 2, էջ 286:

Արևմտահայերի զանգվածային գաղթը սկսվեց 1830թ. վաղ գարնանը, սակայն 1829թ. ուշ աշնանն առաջինը Ախալքալաքի գավառում հաստատվեցին թուրքական դաժան բռնաճնշումներին ենթարկված Արդահանի Վել գյուղի հայ կաթոլիկները՝ բացելով Ախալքալաքից արևելք ընկած Խուլգումո, Բավրա, Կարտիկամ, ինչպես և գավառի հյուսիսային Տուրցխ գյուղերի նոր տարեգրությունը[1]։

Ախալքալաքի Ալաստան և Վարևան գյուղատեղիներում հաստատվեցին նաև 1830թ. Կարնո գավառի գյուղերից տեղափոխված հայ կաթոլիկները՝ այդպիսով փրկվելով ֆիզիկական բնաջնջումից և իսլամացման հնարավոր վտանգից։ Նույն տարիներին Խնուսից, Ստորին Բասենից գաղթած հայ կաթոլիկների մի հատված վերաբնակվեց ներկայիս Նինոծմինդայի շրջանի հայկական գյուղերում՝ Հեշտիայում, Ուջմանայում, Թորիայում։ Կարնո գաղթականության մի հատված հաստատվեց Ախալցխայում։

Սակայն այս գաղթի պատճառով գլխովին կրճատվեց արևմտահայության թվաքանակը, Կարնո գավառի հայ կաթոլիկ գյուղերի շատ քիչ թվով բնակչություն չգաղթեց՝ հույս ունենալով, որ Հռոմեական կաթոլիկ եկեղեցու հովանավորությունը թույլ չի տա թուրքական իշխանություններին հաշվեհարդար տեսնել իրենց հետ։

Ինչպես նշում է պատմաբան Ա.Մելքոնյանը. «...արևմտահայերի գաղթի հետևանքով ոչ թե հայացավ այս տարածաշրջանը, ինչպես պնդում են վրաց գիտական ու քաղաքական շրջա-

[1] *Մելքոնյան Ա.,* նշվ. աշխ., էջ 185։

նակները, այլ՝ Ջավախքի տեղաբնիկ հայության թիվը համալրվեց արևմտահայերով»[1]:

Նոր կազմավորված հայ կաթոլիկ գյուղական համայնքները բավական հաջող դիմագրավեցին տարածաշրջանային բազմաթիվ դժվարությունների՝ տեղի չտալով մահմեդականների, ինչպես նաև վրաց ուղղափառների դավանափոխ լինելու կոչերին:

19-րդ դ. 30-ական թվականներին մի շարք հայ լուսավորչական և կաթոլիկ գյուղերի բնակիչներ, աստիճանաբար հարմարվելով տեղանքին, նախաձեռնում են դպրոցներ հիմնելու գործը: Դրանք հիմնականում ամայի գյուղատեղիներում պահպանված եկեղեցիներին կից ծխական դպրոցներ էին, որոնք, տևական կյանք ունենալով, զգալի ավանդ բերեցին գյուղերի բնականոն կենսագործունեության ծավալման գործում: 19-րդ դ. 40-ական թվականներից սկսած՝ հայ կաթոլիկների կյանքում տեղի ունեցավ կարևոր իրադարձություն. շինարար-ճարտարապետների, գյուղացիների համատեղ ջանքերով կառուցվում են եկեղեցիներ, աշխատանքներն արագացնելու նպատակով պակաս կարևոր չէր Զմմառի և Պոլսի հայ կաթոլիկների, այդ թվում և Հռոմի կողմից ուղարկված դրամային օգնությունը:

Սակայն կաթոլիկ հոգևորականների պակասը հնարավոր չէր համալրել միայն ծխական դպրոցների հաշվին, առավել ևս, որ դրանք ամբողջովին չէին կատարում նման գործառույթներ:

Ախալցխայի և Ախալքալաքի մեկ տասնյակից ավելի հայ կաթոլիկ գյուղերը հոգևոր առումով դրվեցին Ախալցխայի հայ կաթոլիկ առաջնորդի իրավասության ներքո: Հռոմի ազդեցությունից խուսափելու նպատակով՝ ցարական իշխանություն-

[1] Նույն տեղում, էջ 196:

ները կաթոլիկների շատ իրավունքներ սահմանափակեցին, իսկ առաջնորդի պաշտոնը դարձավ նշանակովի[1]: Բնույթով քաղաքական այս որոշումն արգելք հանդիսացավ օտարազգի լատինածես հոգևորականների ներկայությանը հայ կաթոլիկ գյուղերում, և դա նպաստեց այն բանին, որ վերջիններս ինքնակազմակերպան միջոցով, այն է՝ սպասարկող քահանաներ պատրաստելու հարցերում, ինքնակամ նախապատվությունը տան միայն հայերին:

Ստույգ հայտնի է, որ այդ խնդրի լուծման համար Մխիթարյան միաբանությունում, Կ.Պոլսում, Վատիկանում, Զմմառում, հետագայում՝ Հռոմի Լևոնյան վարժարանում և այլ երկրների կրոնական հաստատություններում հոգևորականներ պատրաստելու նպատակով հայ կաթոլիկ գյուղերից ընտրվում էին ընդունակ պատանիներ: Դրա մասին է վկայում նաև 1866թ. իտալերենով պահպանված մի փաստաթուղթ, որը հաստատում է վերն ասվածը[2]:

1860-1880-ական թվականներին Վրաց եկեղեցու ներկայացուցիչները Վրաստանի գրեթե ողջ տարածքում, այդ թվում՝ Ախալցխայի և Ախալքալաքի գյուղերի հայ կաթոլիկներին դավանափոխ անելու նպատակով մեծ շարժում ծավալեցին: Թիրախային խումբ էին ընտրվել Ախալքալաքի շրջանի Բավրա, Խուլգումո, Կարտիկամ և Տուրցխ գյուղերի հայ կաթոլիկները: Երբեմնի վելցիները մերժեցին վրաց հոգևորականության պահանջները:

[1] Նույն տեղում, էջ 225:

[2] Բավական արժեքավոր այդ փաստաթղթում ներկայացված են Ախալքալաքի, Ախալցխայի և Վրաստանի տարբեր շրջաններում բնակվող, հայ կաթոլիկ համայնքներից առաջադրված հոգևորականների նոր պաշտոնները, տե՛ս *Directorium officii divini pro doecesi Tiranspolensi in Annum Domini, 1866, Hierarchia Romano-catholica,* http://www.petergen.com/bovkalo/sp/tyraspol1866.html:

Ինչպես վկայում են այս երևույթի մասին պահպանված աղբյուրները, 1886թ. գավառապետը՝ իշխան Սմբաթովը բնակչության շրջանում աշխարհագիր անցկացնելու ժամանակ, փորձել է այս գյուղերի բնակիչներին գրանցել որպես վրացիներ, սակայն մի տուն էր վախից վրացի գրվել, իսկ մյուսներն ասել էին, որ հայեր են[1]:

«Այդ ընտրությունը պատահական չէր: Քարոզարշավի կազմակերպիչները վերոհիշյալ գյուղերում ակնկալում էին հաջողություն: Նրանք կարծում էին, որ այդ գյուղերի բնակիչները, մասնակիորեն թրքախոս ու դավանանքով կաթոլիկ լինելով, հեշտությամբ կարող էին հակադրվել հայ առաքելականներին և ընդունել վրացադավանություն,- նշում է Ա.Մելքոնյանը,- ... չէր տրվում որևէ բացատրություն, թե ինչու էին վելցիները թուրքերենին զուգահեռ պահպանել հայերենը, հայկական անունները, կենցաղը, ծիսական արարողակարգը, հայկական ինքնագիտակցությունը և ինչ հիմքեր կային այդ մարդկանց «վրացի վերածելու» համար»[2]:

Թեև վրաց հոգևորականության կողմից հայ կաթոլիկներին դավանափոխ անելու ծրագիրը տապալվեց, այդուհանդերձ, այսօր էլ վրաց մի շարք պատմաբաններ, առանց ծանրակշիռ փաստարկների, իրենց հակագիտական մոտեցումներով, անհարկի փորձում են առաջ քաշել այն թեզը, թե վերոհիշյալ գյուղերի հայ կաթոլիկները նախկին վրացիներ են, որոնք հետագա-

[1] *Լալայան Ե.,*Երկեր, հ. 1, Երևան, 1983, էջ 87:
[2] *Մելքոնյան Ա.,* նշվ. աշխ., էջ 226:

յում հայացել են[1]։

20-րդ դարասկզբին Ջավախքի հայությանը նոր և ծանր փորձություններ էին սպասվում։ 1914թ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Ռուսական կայսրությունը զորակոչեց նաև Ախալքալաքի հայերին։ Նրանց զգալի մասը զոհվեց Ավստրո–հունգարական ճակատում և թաղված է Ավստրիայում գտնվող եղբայրական գերեզմաններում։

Հայոց ցեղասպանության տարիներին Օսմանյան կայսրության հպատակ հայ կաթոլիկները ևս անմասն չմնացին կոտորածներից, բռնի իսլամացման գործընթացներից։ Տարբեր տվյալներով՝ 150 հազարի հասնող հայ կաթոլիկներից կայսրությունում կենդանի մնացին շուրջ 20 հազարը, որոնք էլ հիմնականում, բռնագաղթի հետևանքով, բնակություն հաստատեցին Լիբանանում, Սիրիայում, Ֆրանսիայում, մի մասը պահպանեց ներկայությունը Կոստանդնուպոլսում, Անկարայում։

Ախալքալաքի ռուսահպատակ հայ կաթոլիկները, որոնք, տնտեսական և սոցիալական ծանր պայմաններից ելնելով, առևտուր էին անում կամ ուսումնառության նպատակով գտնվում էին Կ.Պոլսում, պահպանելով կապը նաև ծննդավայրի՝ արևմտահայկական Կարին-Էրզրումի հետ, ևս ձերբակալվեցին և ուղարկվեցին Դեյր Էզ-Զորի անապատներ[2]։

Ինչպես իրավացիորեն նկատել է պատմաբան Ս.Արոյանը. «*Թուրքական ջարդարարները հայերին կոտորում էին ոչ թե*

[1] *Мамулия Г.,* Концепция государственной политики Грузии в отношении депортированных и репатриированных в Грузию Месхов. Общественно-политический журнал. "Центральная Азия и Кавказ", № 1(2) 1999 г., http://www.ca-c.org/journal/cac-02-1999/st_19_mamulija.shtml:

[2] Տե՛ս *Ն.Մակարով,* «Դեյր-Էզ-զորի աքսորյալը», Երևան, 2001:

*նրա համար, որ նրանք առաքելականներ էին կամ հայ կաթողիկեներ* (իմա՝ կաթոլիկներ- Ս.Ա.): *Նրանք կոտորվեցին միայն նրա համար, որ ... հայ էին»*[1]:

1918թ. Ջավախք ներխուժած թուրքական զորքերը տեղի մահմեդականների համագործակցությամբ հարձակումներ էին գործում հայկական և վրացական գյուղերի վրա: Մի շարք գյուղեր, թեև վատ զինված, դիմեցին ինքնապաշտպանության, որին առաքելադավան հայերի հետ նաև ակտիվ մասնակցություն ունեցան հայ կաթոլիկները, մասնավորապես՝ Ալաստան գյուղում ստեղծվեցին 300 հոգուց բաղկացած կամավորական խումբը և Վարևան գյուղի առանձին խմբերը[2]: Սակայն նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին գավառի հայության մեծ մասը, ինչպես նաև վրացիներ գաղթեցին Ծալկայի և Բակուրիանի բարձունքներ: Գաղթականության զգալի մասը սովի, ցրտի, համաճարակների և թուրքական հարձակումների հետևանքով տվեց ավելի քան 40 հազար զոհ[3]:

Աղբյուրների համաձայն, չգաղթածների թվում էին հայ կաթոլիկները, որոնց ժամանակի ընթացքում պարտադրվել էր թուրքերեն խոսել (Բավրա, Խուլգումո, Կարտիկամ գյուղերում ներկայումս ամբողջապես խոսում են մայրենի լեզվով՝ հայերեն), և ռուս դուխոբորները[4]: Տուրցխ, ինչպես և Ալաստան, Վարևան գյուղերի հայ կաթոլիկները կազմեցին գավառի հայ գաղթականության մի մասը: Բակուրիանի գաղթից վերադառնալուց

[1] *Ароян С.,* Краткая история армянской католической церкви, www.armeniancatholic.ru/ru/library/armenrus.html

[2] *Ա.Սանույան,* Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918-ի ինքնապաշտպանությունը,Երևան, 1992, էջ 129:

[3] *Մելքոնյան Ա.,* նշվ. աշխ., էջ 352:

[4] ՀՀ ԳԱԱ ՊԻԱ, Լեոյի անձն. ֆ. 1, ց. 1. գ. 242, թ.4-5, Մեջբերված է *Մելքոնյան Ա.,* նշվ. աշխ., էջ 282:

հետո 900 բնակիչ ունեցող Տուրցխ գյուղից կենդանի էին մնացել 300 հոգի, որոնց գրեթե կեսը կարճ ժամանակում վախճանվել էր հայրենի գյուղում[1]:

Ալաստանի 2074 և Վարևանի 706 հայ բնակիչներից Բեռնալի լեռնանցքում, Բակուրիանում, Բորժոմում, համապատասխանաբար, 880-ը և 300-ից ավելին մահացան:

Հատկանշական է, որ շատ հայ երեխաներ և երիտասարդ աղջիկներ առևանգվել էին թուրքերի կողմից: Նրանց բռնի իսլամացված սերունդների մի մասն այսօր հիմնականում բնակվում է Ստամբուլում[2]:

Քանի որ թուրքական զորքերն իրենց հետ տարել էին նաև հայերի ինչքն ու ամբարներում կուտակած բնամթերքը, պատահում էին եզակի դեպքեր, երբ սովի մատնված գյուղերի բնակիչները՝ երեխաներին փրկելու համար, ստիպված էին լինում վերջիններիս անվերադարձ հանձնել վրացիների խնամակալությանը[3]:

Ախալքալաքի հայությունը, որը դժվարին օրեր էր ապրում, կրկին կանգնեց դավանափոխ լինելու մի նոր՝ վրաց մենշևիկների քաղաքականության առջև: Ազգափոխման եղկելի

[1] *Կարապետյան Ս.,* Ջավախք, Երևան, 2006, էջ 502:

[2] Օրինակ, Ալաստան գյուղից Օսմանյան կայսրություն են քշվել մի քանի երեխա և կին, թեև հարազատները փորձել են ամեն գնով հետ բերել նրանց, այդուհանդերձ, հարցը ժամանակին մտել է փակուղի: Ներկայումս Թուրքիայում բնակվող, արդեն իսկ իսլամացված ջավախահայ կաթոլիկների մասին եղած կցկտուր տեղեկությունները պարզ են դարձել անձնական կապերի շնորհիվ: Սակայն այս երևույթի մասին ամբողջական պատկերացում ստանալու համար հարկավոր է առանձին ուսումնասիրություն, որը օբյեկտիվ պատճառներով բախվում է մի շարք խոչընդոտների:

[3] Այսպիսի դեպքեր արձանագրվել են Ալաստան գյուղում, որտեղ, օրինակ, երեխաներից մեկին վաճառել են Սամտրեդիայի վրացիներին՝ միաժամանակ դավանախոխելով ուղղափառության:

երևույթի մասին ժամանակին արտահայտվել է Պողոս Աբելյանն Ախալքալաքի հիմնահարցի մասին զեկուցագրում, որը ծանոթագրություններով ներկայացրել է պատմաբան Ա.Մելքոնյանը. «...ինչպես հայախոս հայ կաթոլիկներին (ներկայումս 7-8 հազար), այնպես էլ տաճկախոս հայ կաթոլիկներին (թվով մոտ 9000) վրաց մենշևիկյան կառավարության օրոք ու հովանավորությամբ և վրաց մամուլի զգալի մասը և ինքը՝ մենշևիկյան կառավարությունը, զանազան խոստումներով ու ահաբեկումներով, հայտարարեցին վրացի կաթոլիկներ... Հայ կաթոլիկների մի մասը՝ անգիտակից, աղքատ, ճնշված մասը, ինքը նույնպես ինքնապահպանման բնազդից դրդված, իրեն վրացի սկսեց համարել, և շատերն իրենց ազգանունները վերածեցին -ձե, -շվիլի վերջավորությունների: Բայց մյուս մասը կանգ չառավ մենշևիկյան բլոկի հալածանքների դեմ և իր մարդկային արժանապատվության դեմ ոչինչ չարեց՝ նա իրեն հայ է համարել, հայ էլ համարում է»[1]:

Հայկական ազգանունները վրացականով փոխելու մասին Աբելյանի հիշատակումը, հավանաբար, վերաբերում է Ախալքալաքի ներկայումս Ասպինձայի շրջանի կաթոլիկ Վարգավ, Խզաբավրա և անբնակ Բնելա գյուղերին: Վերջիններիս բնակիչները բնիկ հայեր էին, որոնք երկրամասի իսլամացման ժամանակ ստիպված ընդունել էին կաթոլիկություն: Խորհրդային կարգերի հաստատման առաջին տարիներից սկսվեց նրանց վրացականացման քաղաքականությունը[2]:

[1] *Մելքոնյան Ա.*, նշվ. աշխ., էջ 467-468:

[2] *Յակոբեան Պ.*, Հայ կաթոլիկութիւն պատմա-քննական լոյսի տակ, Հրաւէր ողջմտութեան, Էջմիածին, 1993, էջ 86:

1921թ. մարտին քեմալական թուրքերը բռնազավթեցին Ախալքալաքի գավառը՝ նոր կոտորածներ իրականացնելով հայ բնակչության նկատմամբ։ Թուրքերի հեռանալուց հետո Խորհրդային Վրաստանի իշխանությունները շարունակեցին գավառի հայության նկատմամբ ազգային խտրականության մենշևիկյան պետության քաղաքականությունը[1]։

Պատահական չէ, որ որոշ գյուղերի (հատկապես հայ կաթոլիկների) ներկայացուցիչներն այդ օրերին քայլեր էին անում իրենց համագյուղացիներին Ռուսաստան գաղթեցնելու ուղղությամբ։ Խորհրդային Վրաստանի կառավարությունը, անհանգստացած գավառի ամայացման վտանգից, հատուկ դեկրետով հայերին արգելեց հեռանալ իրենց բնակավայրերից[2]։

Վրաստանի խորհրդայնացմամբ՝ կաթոլիկ հայերի առջև նոր փորձություններ ծառացան, որոնք հետևանք էին խորհրդային իշխանության վարած աթեիստական քաղաքականության։ Խորհրդային կարգերի հաստատման առաջին տասնամյակներում հակաեկեղեցական քաղաքականությունն ուղեկցվեց հոգևորականության նկատմամբ բռնարարքներով, աքսորով, ֆիզիկական ոչնչացումով, եկեղեցիների քանդմամբ, ինչպես նաև գույքի բռնագրավմամբ։

Ախալքալաքի հայկական գյուղերից սերող հոգևորական դասի ներկայացուցիչներին, որոնք գտնվում էին Իտալիայում, Թուրքիայում, Լիբանանում, խորհրդային իշխանությունն ար-

[1] *Ա. Մելքոնյան,* նշվ. աշխ., էջ 348։

[2] Նույն տեղում, էջ 341։

գելեց վերադառնալ Ջավախք[1] և շարունակել հոգևոր գործունեությունը: Սամցխե-Ջավախքը[2] համարվեց «սահմանային գոտի». այդ ամենի պատճառով կաթոլիկ հոգևորականությունը, իբրև արտասահմանի հետ կապված անվստահելի տարր, մեծ խոչընդոտների էր հանդիպում գյուղեր այցելություններ կատարելիս, քանի որ այնտեղ մեկնելու համար անհրաժեշտ էր հատուկ անցաթուղթ[3]:

Խորհրդային Միությունում սկսված ստալինյան համատարած հետապնդումների և բռնությունների ժամանակ Վրաստանի տարածքում տեղի ունեցան նաև հայ կաթոլիկ կղերականների համատարած ձերբակալություններ, նրանց մեծ մասը շինծու, հատկապես լրտեսության մեղադրանքներով

---

[1] 1962թ. այս շրջաններ կարողացավ այցելել միայն «Բազմավեպ»-ի գլխավոր խմբագիր, Մխիթարյան հայր, ծնունդով Ալաստան գյուղից՝ Եղիա Փեչիկյանը: Ջավախք մեկնելու հարցում նրան օժանդակեց Վազգեն Վեհափառը:

[2] Ինչպես նշել է Ա.Մելքոնյանը 2003թ. լույս տեսած իր աշխատությունում. «Այսօր պատմական Ջավախքն իր երկու շրջաններով հիմնականում հայաբնակ է մոտ 100 գյուղերով և ավելի քան 100 հազար բնակչությամբ (95%-ը՝ հայեր, հարևան Ախալցխայի, Ասպինձայի և Ծալկայի շրջաններում հաշվվում է մոտ 30 հայկան գյուղ՝ 60 հազ. հայ բնակիչներով)» (տե՛ս *Մելքոնյան Ա.*, նշվ. աշխ., էջ 359):

Ախալցխայի, Ախալքալաքի, Բոգդանովկայի, Ասպինձայի, Աղիգենի, Բորժոմի շրջանները միավորվել են մեկ վարչատարածքային միավորի՝ Սամցխե-Ջավախքի մեջ՝ 1990-ական թթ. վրացական իշխանությունների կողմից իրականացված վարչական փոփոխությունների հետևանքով: Շատերը գտնում են, որ Ջավախքում տվյալ վարչատարածքային միավորի ստեղծումն իրականում նպատակ ուներ նվազեցնելու տեղի հայ բնակչության տեսակարար կշիռը (տե՛ս *Մինասյան Ս.,* Վրաստանի էթնիկական փոքրամասնությունները, Երևան, 2006, էջ 120):

[3] *Мартен А.,* Католическая энциклопедия. Т. 1, Москва, Издательство францисканцев, 2002, с. 1491:

աքսորվեցին Սոլովկի կղզի, Արխանգելսկ և այլ աքսորավայրեր[1]: Մի մասն ստիպված է եղել հրաժարվել հոգևորական լինելուց, սակայն դա չի խանգարել, որ ծպտյալ վարեն իրենց գործունեությունը: Օրինակ, հայ կաթոլիկ հոգևորական Կարապետ Դիրլուգյանը տաժանավայրից վերադառնալուց հետո (1939թ.) բնակվելով Աբխազիայի Օչամչիր քաղաքում՝ շրջում էր Վրաստանի հայ կաթոլիկ գյուղերում՝ կատարելով ծիսական արարողություններ: Նույնիսկ եղել են դեպքեր, որ հայ պատանիներին կնքել է քնած ժամանակ, որպեսզի վերջիններս չպատմեն այլոց:

1936-1937 թվականներին Ջավախքում սաստկացան հալածանքներն ու ճնշումները, որին զոհ գնաց ավելի քան 2500 մարդ՝ մեծ մասամբ ուսյալ և նշանավոր մարդիկ[2]:

Ինչպես վկայում են հայ կաթոլիկ գյուղերի բնակիչները, համագյուղացիների նկատմամբ հալածանքներն այլ ենթատեքստ են ունեցել: Հայ կաթոլիկներին առավելապես աքսորել են իբրև «Վատիկանի գործակալներ»: Անհեթեթ մեղադրանքների

[1] Այս ձերբակալությունների հետևանքով մի շարք հայկական կաթոլիկ գյուղեր զրկվեցին հոգևորականներից, մասնավորապես՝ առաջին կորուստը կրեց Ախալքալաքի Ալաստան գյուղը: 1928թ. ձերբակալվում և հետագայում՝ 1937թ., Սոլովկի կղզում գնդակահարվում է սույն գյուղի հոգևոր հովիվ, Լևոնյան վարժարանի նախկին սան, լուսավորյալ գիտնական Ստեփան Երոյանը (անձնական արխիվ): Նույնը պատահեց Բաթումի հայ կաթոլիկների հովիվ Իոսիֆ (Հովսեփ) Թաթոյանի (տե՛ս Roman Dzwonkowski SAC "Losy duchowieństwa katolickiego w ZSSR 1917-1939. Martyrologium", Lublin, 1998. c. 479), Ախալցխայի Ծղալթբիլա գյուղի վարդապետ Քերոբ Տեր-Պողոսյանի հետ (տե՛ս *Ս.Կարապետյան, Ախալցխա, Երևան, 2008, էջ 218): 1930թ. Թիֆլիսում ձերբակալվում է նաև հայ կաթոլիկների կառավարչության ղեկավար Հակոբ Բազարատյանը, որը ծանր և երկարատև հիվանդությունից հետո մահանում է Սոլովկի կղզում:*

[2] *Ջուռնաջյան Ս.*, Ջավախք, Ժամանակագրություն, Երևան, 2002, էջ 117:

պատճառով տուժեցին Ալաստանի 40, Թորիայի 36, Ուջմանայի 41 բնակիչ: Սակայն փաստենք, որ միայն «Վատիկանի գործակալ» լինելու հանգամանքը չէր աքսորվելու պատճառը (դա հորինված պատճառ էր), ինչպես պնդում են հայ կաթոլիկները. նրանց թվում էին կրթամշակութային և հասարակական գործունեություն ծավալող գործիչներ, նախկին դաշնակցականներ կամ հնչակյաններ: Այս հանգամանքը մեկ անգամ ևս հաստատում է, որ Ջավախքի հայ կաթոլիկներն ունեին իրենց քաղաքական կողմնորոշումը և ոչ թե տարադավան օտար զանգված էին, այլ Հայության ազգային խնդիրներով մտահոգ մարդիկ:

Խորհրդային իշխանությունները եկեղեցու և ժողովրդի միջև եղած հոգևոր կապերն արմատախիլ անելու նպատակով որոշում ընդունեցին փակել դեռևս գործող եկեղեցիներն ու մատուռները: Բացառությամբ Տուրցխի[1] գյուղի եկեղեցու՝ մնացած բոլոր եկեղեցիները վերածվեցին ցորենի ամբարների, իսկ դրանց պատկանող արժեքավոր գույքի մեծ մասն առգրավվեց:

Այդ ամենը պատճառ դարձավ, որ Հայ առաքելական և կաթոլիկ բազմաթիվ գյուղերի «մասնավոր տներում» բացվեցին աղոթատեղիներ: Սակայն 1930թ. դրանցից շատերը հայտնաբերվեցին իշխանությունների կողմից և փակվեցին:

1930թ. գավառը բաժանվում է երկու շրջանի՝ Ախալքալաքի և Բոգդանովկայի, ինչի հետևանքով Բոգդանովկայի կազմի մեջ մնացին Թորիա, Հեշտիա, Ուջմանա, իսկ մյուսում՝ Ալաստան, Վարևան, Տուրցխ, Խուլգումո, Բավրա, Կարտիկամ հայ

[1] Ստալինյան բռնապետության տարիներին իշխանությունները ցանկացել են գյուղի եկեղեցին, ինչպես հարևան շատ այլ բնակավայրերում, վերածել պահեստի, սակայն տուրցխեցիներն ընդդիմացել են, և եկեղեցին շարունակել է գործել: Տե՛ս *Կարապետյան Ս.,* Ջավախք, Երևան, 2006, էջ 505:

կաթոլիկ գյուղերը։

1930-1991թթ. ընկած ժամանակաշրջանը ջավախահայության համար նորանոր դժվարությունների տարիներ էին[1]։ ԽՍՀՄ փլուզումից հետո ի հայտ եկան նոր իրողություններ. սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի և աշխատատեղերի բացակայության պատճառով մեծ չափերի հասավ արտագաղթը Ռուսաստան և այլ երկրներ, ինչն այսօր էլ ցավալիորեն շարունակվում է։ Անմխիթար վիճակում հայտնվեցին դպրոցներն ու մշակութային տները, հիվանդանոցները, ավտոճանապարհային հանգույցները։

Այսպես կոչված հայ «ֆրանգ»-ների շրջանում կաթոլիկությունը վերստին վերելք ապրեց հատկապես Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ նոր իրավիճակը լայն հնարավորություններ ընձեռեց Հռոմի հոգևոր ղեկավարներին միանձնյա որոշել երկու երկրների հայ կաթոլիկ համայնքներին մեկ թեմում ընդգրկելու հարցը։

Վրաստանի անկախացումից հետո Սամցխե-Ջավախքի հայ կաթոլիկները փաստացի մտան նորաստեղծ Արևելաեվրոպական թեմի մեջ, որը հիմնադրվեց 1991թ.՝ Գյումրի կենտրոնով։ Քաղաքի ընտրությունը պատահական չէր, քանի որ հայ կաթոլիկների մեծ մասը բնակվում է Հայաստանի հյուսիսային շրջաններում։ Դա որոշ չափով սահմանից այն կողմ հայ նույնադավանների հետ հարաբերություններ հաստատելու հար-

[1] Նախապատերազմյան շրջանում հարկադիր կոլեկտիվացումն ուղեկցվում էր բռնություններով և աքսորով, ինչից տուժեցին նաև ջավախահայերը։ Նրանք իրենց մասնակցությունն ունեցան նաև Երկրորդ համաշխարհային պատերազմում։ Հետագայում՝ 1988-1994թթ. համազգային շարժման տարիներին, բազմաթիվ հայորդիներ մարտնչեցին նաև Արցախում։

թակ դարձավ:

Այսօր Սամցխե-Ջավախքում հայ կաթոլիկ համայնքները համախումբ բնակվում են Ախալցխայում և նրա շրջակա գյուղերում, ինչպես նաև Ախալքալաքի, Նինոծմինդայի շրջաններում: Վերջին երկու շրջանների համայնքները, որոնք հիմնականում գյուղական են, միմյանցից բավական անջատ տարածքներում են գտնվում, սակայն ամենակարևորն այն է, որ կապող օղակը հայ կաթոլիկ լինելու ընդհանուր պատմական հիշողությունն է:

Նրանք հայ ազգի անբաժանելի մասն են՝ ներկայանալով որպես զուտ դավանանքային համայնք, որն այսօր իր առանձնահատուկ խնդիրներն ունի: Լայն իմաստով վերոհիշյալ շրջանների հայ կաթոլիկների այսօրվա խնդիրներն առանձնապես չեն տարբերվում հայ առաքելականների խնդիրներից և տեղավորվում են Սամցխե-Ջավախքի հիմնահարցերի շրջանակներում: Նույն հայերն են, նույն խնդիրները:

## *Ախալքալաքի և Նինոծմինդայի հայ կաթոլիկ գյուղերի մասին*

### *Ախալքալաքի շրջան*

***Ալաստան.*** ներկայիս բնակիչների նախնիները փոխադրվել են Կարնո Արծաթի և Թվանջ[1] գյուղերից: Գյուղում այսօր գործում է Վերափոխման Ս.Աստվածածին կաթոլիկ եկեղեցին՝ կառուցված 1856թ.: Վերանորոգվել է 2008-2009թթ. և այժմ գործում է: Գյուղի տարածքում գործում են համեմատաբար վերջերս կառուցված երեք մատուռ:

Ունի եռահարկ մեկ միջնակարգ դպրոց (հիմն. 1990թ.)՝ 115 աշակերտով, որտեղ սովորում են նաև հարևան գյուղերի երեխաները: Նախկին դպրոցը գործում է այլ նպատակների համար:

Հիվանդանոցը վերանորոգվել է 2005թ., *SIF*-ի՝ «Մասնագիտացված ներդրումային ֆոնդ»-ի կողմից: Սակայն բժշկական ժամանակակից սարքավորումների և աշխատողների պակասի պատճառով չի գործում, մինչդեռ այդ բացը լրացնելու դեպքում կարող է սպասարկել հեռավոր հյուսիսային շրջաններում բնակվող մարդկանց, ինչպես նախկինում:

*Բնակչությունը:* 1968թ. սկսած՝ ավելի քան 2000 բնակչություն ունեցող գյուղից արտագաղթի պատճառով 1987թ. գյուղում մնացել է շուրջ 1300 մարդ: 1991 թվականից հետո բնակչու-

[1] 1950-ական թվականներին հանրապետական Թուրքիայում վերոհիշյալ հայկական տեղանունները թուրքականով փոխարինելու ժամանակ (Արծաթին դարձել է *Yeşilyayla,* իսկ Թվանջը՝ *Güzelova)* սույն գյուղերի բնակիչների կողմից խիստ դժգոհություն է եղել: Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ այս գյուղերի չգաղթած բնակիչների մի մասը Հայոց ցեղասպանության տարիներին մահվան սպառնալիքի տակ հրաժարվել է կաթոլիկությունից և իսլամացել, իսկ մի մասն էլ կոտորվել է:

թյան թվաքանակն ավելի է կրճատվել. ներկայումս՝ մոտավորապես 400 հոգի: Արտագաղթում են Հայաստանի Հանրապետություն, Ուկրաինա, Ռուսաստանի տարբեր քաղաքներ, գլխավորապես Մոսկվա, Ռոստով, Սամարա: Սակայն 1960-ական թթ. հաստատվել են նաև Ախալքալաքում, Ախալցխայում, Բաթումում, Թիֆլիսում, Վալեում, մի քանի ընտանիքներ էլ՝ Խերթվիսում: Բնակչության հիմնական զբաղմունքը սակավ եկամտաբեր գյուղատնտեսությունն ու անասնապահությունն են:

***Բավրա:*** Ներկայիս գյուղի բնակիչները նշված վայրում հաստատվել են 1929թ. Արդահանի Վել գյուղից: Գտնվում է Ախալքալաքից 1կմ արևելք: Գյուղում գործում է Սբ. Խաչ եկեղեցին՝ կառուցված 1887թ.: Ծիսական արարողությունները, պատարագները, ինչպես և մյուս հայ կաթոլիկ գյուղերում, Տուրցխ գյուղի լեհ և հայ հոգևորականների կողմից կատարվում են հայերենով: 1977թ. ութամյա դպրոցը վերածվել է միջնակարգի:

*Բնակչությունը:* 1987թ. գյուղն ուներ 1387 բնակիչ[1]: Արտագաղթողների թիվը համեմատաբար քիչ է: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: 30-ից ավելի կանայք աշխատում են Նինոծմինդայի կարի ֆաբրիկայում:

***Խուլգումո:*** Ավերակ գյուղատեղին շենացրել է Արդահանի Վել գյուղից եկած 17 ընտանիք: Գտնվում է Փարվանա գետի աջ ափին, Ախալքալաքի դիմաց: Գյուղում գործում է լավ վիճակում պահպանված Սբ. Ստեփանոս (անվանվել է նաև Սբ. Ստանիսլավ) Հայ կաթոլիկ եկեղեցին: Գյուղը չունի իր սեփական հոգևո-

[1] *Կարապետյան Ս.,* Ջավախք, Երևան 2006, էջ 96:

րականը: Ունի մեկ միջնակարգ դպրոց, վերանորոգվել է ՀՕՄ օժանդակությամբ, սակայն անհաջող աշխատանքների պատճառով կրկին վերանորոգման կարիք ունի:

*Բնակչությունը:* 1987թ. գյուղն ուներ 1257 բնակիչ՝ 305 տուն, վերջին տասը տարիներին Խուլգումոյից արտագաղթել է 150 ընտանիք, հիմնականում Հայաստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն:

*Զբաղմունքը:* Խուլգումոյում արտադրական ձեռնարկություններ չկան, գյուղացիների եկամտի հիմնական աղբյուրը գետնախնձորն է: Գյուղացիներն իրենք են բերքը հասցնում Թբիլիսի, Քութայիս և այլ քաղաքների շուկաներ, կամ էլ վրացի առևտրականներն են հասնում Խուլգումո[1]: Զբաղվում են նաև կարտոֆիլի մշակությամբ, անասնապահությամբ:

***Կարտիկամ:*** Գյուղի հայ կաթոլիկները ևս Արդահանի Վել գյուղից են: Գործում է Սբ. Աստվածածին կաթոլիկ եկեղեցին: Այստեղ ևս կա հոգևորական չունենալու խնդիրը: Գործում է միջնակարգ դպրոց:

*Բնակչությունը:* Ախալքալաքի բազմամարդ բնակչություն ունեցող գյուղերից էր, 1987թ. տվյալներով՝ շուրջ 2120 մարդ[2]: Հիմնականում արտագաղթում են Ռուսաստանի Դաշնություն, Հայաստանի Հանրապետություն:

[1] *Յակոբեան Թ.*, Կաթոլիկ հայերը «Օրթոտոքս ժողովրդավարական» Վրաստանում, http://www.aztagdaily.com/Archive/11-06-07/html/page4.htm:

[2] *Կարապետյան Ս.*, նշվ. աշխ., էջ 202:

***Վարնան:*** Ներկայիս վարնանցիների մի մասն այստեղ է եկել 1830թ. Կարինի Թվանջ գյուղից: Գործող Սբ. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1843թ., վերակառուցվել 1856թ.[1]: Վերջին երեք տարում գյուղի բարերարի կողմից եկեղեցին ամբողջովին բարեկարգվել է: Դպրոցի շենքը կառուցվել է 1937թ., 1980թ. շահագործման է հանձնվել դպրոցի շենքի նոր համալիրը[2]:

*Բնակչությունը:* Բազմէթնիկ բնակչություն ունեցող գյուղերից էր: Ժամանակին այստեղ ապրում էին միանգամից մի քանի էթնիկ խմբեր՝ հայ կաթոլիկներ, ուղղափառ վրացիներ, հույն ուղղափառներ և «թուրք մեսխեթցիներ»[3]: Հույներն այստեղ հաստատվել էին Արևմտյան Հայաստանից: Խորհրդային ժամանակաշրջանում մի քանի հույն ընտանիք տեղափոխվել էր Ծալկայի շրջանից: Սակայն Խորհրդային Միության փլուզումից հետո հույները հեռացան այստեղից: Մինչև 1944 թվականը Վարնանում բնակվում էին նաև «թուրք մեսխեթցիներ», որոնք ստալինյան ժամանակաշրջանում աքսորվեցին[4], իսկ

[1] Նույն տեղում, էջ 479:

[2] *Զուռնաջյան Ս.*, նշվ. աշխ., էջ 575:

[3] «Թուրք-մեսխեթցիների» ծագման մասին շրջանառվում է մի քանի տեսակետ. վրացական տեսակետի համաձայն՝ իսլամացված վրացիների սերունդներ են, թուրքական տեսակետի համաձայն՝ ծագումով թուրք են և Սամցխե-Ջավախքում հաստատվել են Օսմանյան կայսրության շրջանի բնակչության տեղաշարժերի հետևանքով (տե՛ս *Հովյան Վ.,* Թուրք մեսխեթցիների Վրաստան վերադարձի խնդրի շուրջ, Հանրապետական, թիվ 4 (68), էջ 32): Օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում վրացիներից զատ բռնի մահմեդականացվել էին նաև հայերը. ուղղափառություն ընդունած հայերի մի զգալի մասը նախ վրացանում էր, ապա, կորցնելով ազգային ինքնապաշտպանական հատկանիշները, բավական արագ էլ մահմեդականացվելով թուրքացվում էր՝ համալրելով «մեսխեթցի» էթնոկրոնական շերտերի շարքերը: Տե՛ս *Մելքոնյան Ա.,* նշվ. աշխ., էջ 99:

[4] Վրաստանի կենտրոնական իշխանության հակահայկական քաղաքականության դրսևորումներից է այն, որ Վարնանն ընդգրկված է այն գյուղերի ցանկում, ուր պատրաստվում են վերադարձնել իբրև թե այդ «թուրքերի» սերունդներին, որն էլ ամրագրված է այսպես կոչված «մեսխեթցի թուրքերի» պաշտոնական, թուրքալեզու կայքում, http://www.ahiskalilar.org/portal/modules.php?name=koylerimiz:

վրացիների մեծ մասը, սկսած 1947-ից, վերաբնակվեց կառավարության կողմից միայն իրենց արտոնված, Կուր գետի հովտում գտնվող, «թուրք մեսխեթցիներից» ազատված այգեվետ ու բարեբեր գյուղերում: Համաձայն Ս.Կարապետյանի՝ 2001թ. Վարևանն ուներ 180 տուն հայ, 7-8 վրացի և երկու տուն վրացացած հույն բնակիչ[1]:

Մեր այցելության ժամանակ (2009) վրացիները կազմում էին ընդամենը մեկ ընտանիք: 820 հայ բնակիչ ունեցող գյուղի զգալի մասն արտագաղթել է: Ներկայումս բնակիչների թիվը շուրջ 320 հոգի է:

***Տուրցխ:*** Ախալքալաքի շրջանի հյուսիսային գյուղերից է: Նախնիները եկել են Արդահանի Վել գյուղից 1929թ. (շուրջ 20 ընտանիք), ուր հետագայում հանգրվանել են նաև էրզրումից եկած գաղթականներ, առանձին ընտանիքներ՝ Գորիից, Կարսից, Ռաբաթից[2]: Սբ. Աստվածամոր հայկական կաթոլիկ եկեղեցին կառուցվել է 1856թ. և այսօր էլ գործում է: Ունի երկու հոգևորական՝ Ախալքալաքի և Նինոծմինդայի հայ կաթոլիկների ժողովրդապետ, ազգությամբ լեհ Անդրե Եանիցկին և գյուղի բնակիչ, Իտալիայում հոգևոր կրթություն ստացած Սեդրակ Խաթերյանը:

Օքրո Օքրոյանի ավան նորակառույց միջնակարգ դպրոցը կառուցվել է 2004թ. ռուսաստանաբնակ հայրենակցի կողմից[3]:

[1] *Կարապետյան Ս.*, նշվ. աշխ., էջ 479:

[2] Նույն տեղում, 502-503 էջ:

[3] *Ախալքալաքի Տուրցխ գյուղում բացվեց միջնակարգ դպրոցի նորակառույց շենքը*, http://noyan-tapan.am/news.php?p=0&c=0&t=0&r=0&year=2004&month=09&day=23&shownews=66421&LangID=4#66421

*Բնակչությունը:* Հայ կաթոլիկ գյուղերի մեջ արտագաղթի ամենամեծ ցուցանիշը գրանցվել է Տուրցխում, արտագաղթում է հատկապես երիտասարդությունը: 1991թ. գյուղում բնակվում էր 2550 մարդ, սակայն սոցիալ-տնտեսական ծանր վիճակի պատճառով մինչև 2001թ. բնակչության թվաքանակը նվազեց՝ հասնելով 230-ի[1]: Արտագաղթում են հիմնականում Ռուսաստան: Բնակվում են նաև Ուղմուրտիայում:

***Նինոծմինդայի (նախկին Բոգդանովկայի) շրջան***

***Ասփարա:*** Գյուղը շենացրել է 1924թ. Ախալքալաքի շրջանի Կարտիկամ գյուղից փոխադրված 36 ընտանիք: Եկեղեցի և հոգևորական չունեն: Գյուղում գործում է տարրական դպրոց, որտեղ սովորում է 20 երեխա: Սակավաթիվ բնակչություն ունեցող գյուղերից է՝ մոտավորապես 120 հոգի:

***Հեշտիա:*** Նախնիները Հեշտիա են եկել Արևմտյան Հայաստանի Խնուսի Քյուլլի գյուղից, որտեղ կային նաև տեղաբնիկներ (յեռլիներ): Գործում է Սբ. Աստվածամոր կաթոլիկ եկեղեցին: Անշուշտ, այս եկեղեցին ևս զերծ չի մնացել սրբապատկերների, գրքերի, արձանագրությունների ոչնչացումից, իսկ քահանաները ենթարկվել են հալածանքների[2]:

Ներկայումս գյուղն ունի մեկ հոգևորական՝ Տեր Անտոն Անտոնյանը: Գյուղում հիմնվել է նաև Անարատ յղութեան հայ քույրերի միաբանության վանատունը, որի քույրերը կազմակերպում են գյուղի մշակութային կյանքը: Գյուղում գործում են Վ.Հով-

[1] *Կարապետյան Ս.*, նշվ.աշխ., էջ 503:
[2] Մասիս, 2007, օգոստոս, թիվ 23, էջ 25:

սեփյանի անվան N1 և N2 միջնակարգ դպրոցները, որտեղ համատեղ սովորում է 500-ից ավելի երեխա: Հիմնական ապրուստի միջոցը անասնապահությունն ու գյուղատնտեսությունն է:

*Բնակչությունը:* Բոգդանովկայի շրջանի մարդաշատ գյուղերից էր, 1987թ. բնակվում էր 3630 մարդ[1], սակայն այստեղից էլ արտագաղթը շարունակվում է: Տեղափոխվում են հատկապես Վրաստանի Հանրապետության Օզուրգեթի (նախկին Մախարաձե) քաղաք, այնտեղից էլ արտագաղթում Գելենջիկ: Բնակություն են հաստատել նաև Հայաստանի Հանրապետության քաղաքներում՝ Երևանում, Գյումրիում, Աշոցքի և Տաշիրի մարզերում: Ռուսաստանում բնակվում են Աբինսկ, Անապա, Կուրգանինսկ, Օմսկ, Ուլան-Ուդե, Չիտա և այլ քաղաքներում:

***Թորիա:*** Թորիայի հայ կաթոլիկները գյուղատեղիում հաստատվել են Ստորին Բասեն գավառի Չիթահանք և Խնուսի Քյուլլի գյուղերից: Ներկայումս ոչ բարեկարգ (ներսակողմում) եկեղեցին հիմնադրվել է 1843թ., բազմիցս վերանորոգվել: 1990-ական թթ. կառուցվել է նաև եկեղեցու փայտե զանգակատունը: Ունի մեկ միջնակարգ դպրոց՝ 50 աշակերտով:

*Բնակչությունը:* 1990թ. գյուղում բնակվում էր մոտ 800 հոգի, արտագաղթի հետևանքով բնակչության թիվը կտրուկ նվազել է: Արտագաղթում են Հայաստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն և այլ երկրներ:

***Ուջմանա:*** Գաղթել են Բասեն գավառից: Ըստ Պ.Հակոբյանի՝ Խնուսի Քյուլլի գյուղից[2]: Ունի մեկ եկեղեցի՝ կառուցված

[1] *Կարապետյան Ս.*, նշվ.աշխ., էջ 339:

[2] *Յակոբեան Պ.*, Հրաւէր ողջմտութեան, Էջմիածին, 1993, էջ 131:

1851թ.: Վերանորոգման կարիք ունի: Գյուղին հովվում է Հեշտիայի քահանան: Ունի մեկ դպրոց[1], որը գտնվում է անմխիթար վիճակում:

*Բնակչությունը:* 550 բնակչություն ունեցող գյուղից արտագաղթել է գրեթե կեսը: Արտագաղթում են հիմնականում Հայաստանի Հանրապետություն՝ Գյումրի և Երևան, Ռուսաստանի Դաշնություն:

***Ժդանովական:*** Գյուղը 1930-ականների սկզբին հիմնադրել է Հեշտիայից տեղափոխված մի քանի ընտանիք: Սբ. Սարգիս եկեղեցին հիմնադրվել է 1999թ.: Գյուղը սեփական հոգևորական չունի, հովվում է Հեշտիայի քահանան:

Գյուղի դպրոցում սովորում է 150[2] աշակերտ: ՀՕՄ (Հայ օգնության միություն) ԱՄՆ Արևմտյան ափի «Ջավախք» հանձնախումբ-հիմնադրամի ատենապետուհի Հայկուշ Քոհլերի տրամադրած միջոցներով մի քանի դասասենյակ է ավելացվել, դպրոցը վերանորոգվել է: Օժանդակությունյուն է ցուցաբերվել ուսուցչանոցին (գույք, հեռուստացույց), իսկ 2009թ. նախատեսվում է նոր սանհանգույցի կառուցումը, որը ևս կֆինանսավորի Հայկուշ Քոհլերը[3]:

*Բնակչությունը:* Ըստ տեղացիների՝ գյուղում բնակվում է մոտ 400 մարդ[4]: Ժդանովականցիները բնակվում են նաև Հայաս-

[1] 2000թ. այստեղ սովորում էր 89 երեխա:

[2] Այլ տվյալներով՝ դպրոցում սովորում է 88 աշակերտ, տե՛ս *Սարգսյան Վ.*, Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջան: Նինոծմինդայի կրթական հիմնախնդիրները, http://www.azadakrum.org/azatagrum/articles/natnewsarticle04nov08a.html

[3] Ջավախքը մենակ չէ իր հոգսերի մեջ, «Երկիր» շաբաթաթերթ, 31.10.2008:

[4] Ըստ Պ.Հակոբյանի՝ 1990-ական թվականների սկզբին գյուղը հազարից ավելի բնակչություն ուներ: Տե՛ս *Պ. Յակոբեան,* նշվ. աշխ., էջ 96:

տանի Հանրապետությունում, Վրաստանի Օզուրգեթի քաղաքում, Ռուսաստանի Դաշնությունում:

***Կաթնատու:*** Գյուղը 1928թ. հիմնադրել են Թորիայից և Ուջմանայից տեղափոխված կաթոլիկ հայերը, իսկ առաքելական հայերն այստեղ հաստատվել են Աբուլ գյուղից[1]: Գյուղում եկեղեցի չկա:

Ոչ լրիվ միջնակարգ դպրոցում սովորում է 53 աշակերտ[2]: Գյուղում բնակվում է 300 մարդ:

***Նոր Խուլգումո (Տամբովկա):*** Գյուղը գտնվում է Փարվանա լճի ափին: Հիմնադրել են նույնանուն գյուղից տեղափոխված հայ կաթոլիկները՝ 1928թ.: Գյուղում եկեղեցի չկա: Ունի մեկ դպրոց: Հիմնական զբաղմունքը անասնապահությունն է: Բնակվում է մոտ 300 հոգի:

[1] Նույն տեղում, էջ 96:

[2] *Վերանյան Կ.,* Ջավախահայության կրթական հիմնախնդիրների շուրջ, http://www.noravank.am/file/article/127_am.pdf

## *Արդի իրավիճակը*

### *Փոխադարձ ընկալման խնդիրը*

Երբեմն Հայության դավանանքային (առաքելական, կաթոլիկ, բողոքական և այլ) հատվածներում միմյանց ընկալելու որոշակի խնդիրներ են առաջանում, հատկապես այն ժամանակ, երբ կրոնական և ազգային պատկանելություն եզրերը չեն առանձնացվում: Նման խնդիրներ ունեն նաև Ջավախքի կաթոլիկ և առաքելական հայերը, որոնք թեև թույլ են արտահայտված, այդուհանդերձ, արմատապես վերացած չեն:

19-րդ դ. Սամցխե-Ջավախքի հայ կաթոլիկների և առաքելականների միջդավանական «հակամարտություններ»-ի[1] սաղույցը հալվեց խորհրդային շրջանի կրոնամերժ գաղափարախոսությամբ ստեղծված պայմանների «շնորհիվ»:

Ժողովրդախոսակցական լեզվում այս շրջաններում բնակվող հայ կաթոլիկներին սովորաբար անվանում են «ֆրանգ», «ֆրենգ»: Ոմանք «ֆրանգ» բառի ստուգաբանությունը կապում են Կիլիկյան Հայաստանում Ֆրանցիսկյան միաբանության քարոզիչների անվան հետ[2]: Հետագայում եվրոպացի բառն ասոցիացվել է կաթոլիկ լինելու հետ, և քանի որ Հայոց մեջ կաթոլիկություն էին տարածում առավելապես եվրոպական քարոզիչները, «ֆրանգ»-ը ձեռք է բերել երկիմաստություն՝ միաժամանակ ցույց տալով և՛ կրոնական, և՛ էթնիկ (ֆրանսիացի, իտալացի) պատկանելություն:

[1] *Լալայան Ե.,* նշվ. աշխ, էջ 84-85: Այս երևույթն ավելի շատ տեղ ուներ Ախալցխայում:

[2] *Արոյան Ս.*, Համառոտ պատմութիւն Հայ Կաթողիկէ (կաթոլիկ) Եկեղեցու, էջ 9, 2002, http://www.armeniancatholic.ru/pdf/armchurch.pdf:

Հայ կաթոլիկների համար վիրավորական երանգներ ունեն դրա կրճատ կամ փոփոխված լեզվական «ֆըռռ» և «ֆըռիկ» ձևերը։ Իրենք՝ կաթոլիկ հայերը, նշում էին, որ «ֆրանգ» բառն այնքան էլ վիրավորական չէ, քանի որ, ըստ ավանդության, իրենք այդպիսին են։

Երբեմն «ֆրանգ» բառն այնքան ամուր է նստած հայ կաթոլիկների, հատկապես մեծահասակների գիտակցությունում, որ առաքելականների մասին խոսելիս նրանց կոչում են հայեր, իսկ իրենց՝ «ֆրանգ»-ներ։ Օրինակ, երբ հայ առաքելականը կամ ազգությամբ վրացին իմանում է[1], թե որ գյուղից է սերում կոնկրետ անձը, անմիջապես մատնանշում է նրա «ֆրանգ» լինելը (անշուշտ, այսպիսի չգիտակցված մոտեցումները հանդես են գալիս միայն հասարակ ժողովրդի մոտ)։ Դա որոշ չափով բարդույթներ կարող է ձևավորել, ինչի հետևանքով երբեմն «ֆրանգ» բառեզրը հայ կաթոլիկների կողմից ընկալվում է ոչ թե որպես կրոնական ուղղության հետևորդ, այլ որևէ էթնիկ միավոր (ոչ հայ, պատահել է, որ նույնիսկ ընկալվել է ֆրանսիացի), և դա կարող է նպաստել անհատի խորթացմանը հայկական միջավայրից։

Այլ է պատկերը երիտասարդության և միջին տարիքի մարդկանց շրջանում, որոնք, սովորաբար, ձերբազատված են նախկինում ձևավորված կարծրատիպերից և լուրջ ուշադրություն չեն դարձնում այդ ամենին։ Վերջիններիս համար անգամ անհասկանալի է, թե ինչու են իրենց բնութագրում «ֆրանգ» բա-

[1] Այսօրինակ խնդիրների ականատես ենք լինում հատկապես վրացիների մոտ, երբ դավանական տարբերություններն առաջ են բերում ներէթնիկ բաժանումներ, հատկապես վրաց կաթոլիկների և ուղղափառների միջև, ինչը վերջին տարիներին սուր բնույթ է կրում Գորիում, Քութայիսում։

ռով, երբ հայ քրիստոնյաներ են։

Ջավախահայերի շրջանում գործածությունից դուրս է մնացել հայ կաթոլիկներին բնութագրող մի քանի արտահայտություն, ինչպիսիք են, օրինակ, «մոլորիք», «մոլորյալ», կամ «դրսեցի» բառերը, որոնք այնքան շատ էին օգտագործվում Թիֆլիսի և Բաթումի հայ կաթոլիկների պարագայում։ Զարմանալիորեն դրանք այսօր իմաստազրկվել են՝ տեղափոխվելով այլ հարթություն. և՛ Ջավախքում, և՛ Հայաստանի Հանրապետությունում «մոլորյալ» բառով առավել շատ նշվում է աղանդավոր հայը։

Միջմշակութային փոխազդեցությունը հայ կաթոլիկների կենցաղում կատարվել է եկեղեցու միջոցով և հատկապես անունների պարագայում։ Աստվածաշնչյան անունների կողքին (օրինակ՝ Պողոս, Պետրոս, Մարիամ և այլն) կան նաև Նապոլեոն, Պիոն, Վերոնիկա, Բրջիդա (այս անունը բարբառում դարձել է Բուրուջ), Տալիդա և այլ լատինական անուններ։ Ոմանք կարծում են, թե հայ կաթոլիկները մեծամիտ են և երբեմն իրենց կոչում են «եվրոպացի», այնինչ պետք է նկատի ունենալ, որ կաթոլիկ բառեզրը նաև նույնացվել է եվրոպացու հետ։ Ցանկացած ընտանիքում կարելի է հանդիպել իտալերենով և այլ լեզուներով պահպանված գրականության, որը պատկանել է Եվրոպայում հոգևոր կրթություն ստացած իրենց հարազատներին։ Ջավախքի հայ կաթոլիկներին շրջակա միջավայրի կողմից տրված անվանումներն ավելի շատ ազգագրական իրողություններ են, և նրանց տրված բնորոշիչները չպետք է ընդունել որպես էթնոնիմներ, այլ՝ կիրառված տարածքային («մշեցի»), լեզվական («վրացախոս») և այլ առանձնահատկությունների հենքի վրա։

Նույնը վերաբերում է «ֆրանգ» ինքնանվանմանը: Այն սովորաբար չի մատնանշում էթնիկ պատկանելությունը, այլ ցույց է տալիս, թե դավանանքային ինչ ուղղության հետևորդ է:

***«Մշեցի ֆրանգներ»:*** «Մշեցի ֆրանգներ»-ը ներկայումս առավելապես ապրում են Նինոծմինդայի շրջանի գյուղական համայնքներում՝ Հեշտիայում, Ուջմանայում, Թորիայում և Ժդանովականում: Հայտնի է, որ այս գյուղերի հայ կաթոլիկները Ջավախքում հաստատվել են ոչ թե Մուշից, այլ Խնուսից: Իսկ 19-րդ դ. հայկական մամուլը նրանց ներկայացնում է որպես Մշո դաշտից գաղթած հայ կաթոլիկներ:

Ե.Լալայանն այս առիթով նշում է. «Թորիայի, Ուջմանայի և Էշտիայի բնակիչները Խնուսի Քիլվա (Քյուլլի- *Ա.Ս.*) գյուղից են, խոսում են Մշու բարբառով... Բացի կրոնական ծեսերից ու սովորություններից, ընտանեկան կյանքը, սովորությունները բոլորը նման են հայ լուսավորչականներին...»[1]:

Գուցե Մշո բարբառով խոսելու հանգամանքն էլ առիթ է դարձել, որ նրանց կոչեն «մշեցի ֆրանգ»: Այս գյուղերից Ռուսաստանի Դաշնություն արտագաղթած հայ կաթոլիկներին ևս անվանում են նույն կերպ[2]:

Ուջմանայի և Թորիայի կաթոլիկ հայերին Հեշտիայում ընդունում են որպես «մերոնքականներ», ինչը խնուսցիների սերունդ լինելու հանգամանքով է պայմանավորված: Միավորող է նաև լեզվի գործոնը՝ Մշո բարբառը, որով նրանք տարբերվում

[1] *Լալայան Ե.,* նշվ. աշխ., էջ 84:

[2] *Шахназарян Н.,* Армяне Краснодарского края, Сборник информационно-методических материалов, Краснодар, ЮРРЦ, с. 36, 2008:

են Կարնո բարբառով խոսող հայ կաթոլիկներից:

Ընդհանրապես հայ կաթոլիկների էթնիկ ծագման մասին շահարկումները բավական շատ են հատկապես վրացական կողմից: Նրանք խեղաթյուրում են պատմական այն իրողությունը, որ վերոհիշյալ գյուղերի բնակիչները հայեր են ու հաստատվել են այստեղ Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերից: Մինչև ԽՍՀՄ փլուզումը և դրան հաջորդող տարիներին վրացական մի քանի պարբերական մշտապես փորձել են հայ կաթոլիկներին համարել «հայացած վրացիներ»[1]: 1990-ական թթ. այս միտումը շարունակվեց հատկապես վրացական ազգայնականության դրսևորմանը զուգահեռ և որոշակի խնդիրներ հարուցեց նաև գործնական հարթությունում:

Այդ տարիներին էր, որ վրաց ուղղափառ եկեղեցին նախապատրաստվում էր հայ կաթոլիկներին, այսպես կոչված, դարձի բերելու քաղաքականությանը՝ պատճառաբանելով, որ նրանք նախկին «վրացի կաթոլիկներ» են, որոնք տարբեր գործոնների արդյունքում հայացել են: Այդ պատրվակով 1995թ. անակնկալ Հեշտիա այցելեց Վրաց եկեղեցու առաջնորդ Իլյա Երկրորդը: Վերջինիս նպատակը տեղի հայ կաթոլիկ եկեղեցում վրացական արարողակարգով ծիսակատարություն անցկացնելն էր: Սակայն հանդիպելով բնակիչների համառ դիմադրությանը՝ նա հեռացել է գյուղից[2]: Տասնչորս տարվա վաղեմության այս դեպքը մեկ անգամ ևս փաստում է, որ հոգևորության քաղաքականությունը Վրաստանում շարունակա-

[1] Տե՛ս *Կարապետյան Ս.*, նշվ. աշխ., էջ 291 (ծանոթ.):

[2] Ըստ Հեշտիայի քահանա Անտոնի՝ Իլյա Երկրորդի այցելության օրը գյուղի հասարակությունը սկզբում կարծել է, թե իրենց մոտ է եկել Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինը:

կան բնույթ է կրում և դրսևորվում է նաև մեր օրերում, անկախ նրանից՝ կաթոլիկ, թե առաքելական հայեր են[1]:

Զավեշտալի է, բայց 1999թ. պատմական գիտությունների դոկտոր Գուրամ Մամուլիան, մասնավորապես, նշում էր, որ Ախալքալաքի շրջանի ութ թրքախոս «վրաց» կաթոլիկ գյուղերի (Խուլգումո, Կարտիկամ, Տուրցխ, Կուլիկամ, Բավրա և այլն) բնակիչներն իրենց իբր հայերի շարքն են դասել[2]: Հավանաբար, հեղինակն անտեղյակ է, որ նախ՝ Կուլիկամում ոչ թե կաթոլիկներ, այլ հայ առաքելականներ են բնակվում, և երկրորդ՝ Ախալքալաքի շրջանում գոյություն ունի ընդամենը 6 էթնիկ հայկական, դավանանքով կաթոլիկ գյուղ:

2005թ. ոմն Մանանա Ջավախաշվիլի, հղում անելով վրացական պատմաբաններին, նշում է, որ 1893թ. ցարական իշխանությունների հրամանով վրացական կաթոլիկ եկեղեցին հայկական է հայտարարվել: Այս տեղեկությունը հիմք է հանդիսացել մի նոր կեղծ եզրակացության, այն է. «Վրացի կաթոլիկներին կնքել են հայ կաթոլիկ հոգևորականները՝ տալով նրանց հայկական անուններ, ինչի պատճառով սկսվել է վրաց կաթոլիկների հայացման գործընթացը»[3]:

[1] Վրացական իշխանությունների թողտվությամբ և ՎՈՒԵ քաղաքականության հետևանքով հայ առաքելականներին դավանափոխ անելու քայլեր են կատարվում Նինոծմինդայի շրջանի հայկական Փոկա գյուղում, և, ըստ վրացական տեղեկատվության, արդեն մի քանի հայ ընտանիք ուղղափառացվել է:

[2] *Мамулия Г.,* Концепция государственной политики Грузии в отношении депортированных и репатриированных в Грузию Месхов. Общественно-политический журнал. "Центральная Азия и Кавказ", № 1(2) 1999г., http://www.ca-c.org/journal/cac-02-1999/st_19_mamulija.shtml:

[3] *Джавахашвили М.*, Что значит быть католиком в Грузии в XX веке, Региональная стипендиатская программа фонда им. Генриха Белля для молодых ученых на Южном Кавказе «Идентичность, власть и город в работах молодых ученых Южного Кавказа /сборник статей/», Фонд им. Генриха Белля, Тбилиси, 2005, с. 112:

Բնականաբար, այսօր անօգուտ է խոսել մի հարցի (հայացած վրացիների) շուրջ, ինչն իրականում գոյություն չունի: Դրա արմատական դրդապատճառը հայ մասնագետներին իրենց առաջ քաշած արհեստածին խնդիրների մեջ ներքաշելն է, ինչն էլ գիտակցաբար չի ընդունվում վերջիններիս կողմից:

Եթե վրացիներն ամեն պատեհ առիթով փորձում են հայ կաթոլիկներին «վրացացնել», ապա հայ հեղինակի աշխատության մեջ այլ ծայրահեղությունների ենք հանդիպում: Խոսքը Արարատ Պետրոսյանի «Ֆռանգներ» պատմաազգագրական ուսումնասիրության մասին է[1], որը լայն տարածում ունի համացանցում: Հեղինակն, օրինակ, հիմնվելով մեկ-երկու անձանց ենթադրությունների վրա, առանց դրանք պատմական, լեզվաբանական քննության ենթարկելու, նշում է, որ Թորիայի հայ կաթոլիկները քրդերի և հայերի ասիմիլյացիայի արդյունք են, որը տեղի է ունեցել դեռևս Խնուսում: Նույնիսկ եթե դրանք այլոց տեսակետներ էլ են, վտանգավոր և վիրավորական կարող են լինել թորիացիների համար, ինչի ականատեսը եղանք Թորիայում և հատկապես Խուլգումոյում. ծագման վերաբերյալ նրանց մոտեցումներն ավելի ծայրահեղ բնույթ են կրում: Ա.Պետրոսյանը վրաց հեղինակների կեղծարարությանը գիտական հակահարված տալու փոխարեն էլ ավելի է խորացնում հայ կաթոլիկների ծագման՝ վերջիններիս արհեստականորեն ստեղծած վարկածները:

Խորհրդային Վրաստանի անկախացումից հետո Հեշտիան

[1] *Петросян А.*, Франги: историко-этнографическое исследование, http://www.mashtots.ru/istoriya-armyan-kubani/nauchnye-raboty/frangi-istoriko-etnograficheskoe-issledovanie:

դառնում է Նինոծմինդայի շրջանի կաթոլիկ հայերի հոգևոր կենտրոնը: Հեշտիայի գյուղական հասարակությունը, թերևս, ամենակազմակերպված հայ կաթոլիկ համայնքներից է: Հայ կաթոլիկ եկեղեցու վերագործունեությունն այստեղ սկսվում է 1992 թվականից՝ Անարատ յղութեան հայ քույրերի միաբանության հաստատմամբ: Ինչպես վկայում է միանձնուհի Տաթևիկ Ալբերտյանը, «...եկեղեցին փակ էր, և ծառայում էր կոլտնտեսության որպես պահեստ, որը լցված էր ցորենով ու գարիով»[1]:

1992թ. Հեշտիա գյուղի բնակչությունը ստորագրություններ էր հավաքել, որ ցանկանում են դառնալ առաքելական եկեղեցու հետևորդներ, սակայն Վազգեն Ա վեհափառը, ի պատասխան հեշտիացիների, նշել էր, որ միմյանցից հոտ «չփախցնելու» պայմանավորվածություն կա Վատիկանի հետ: Դրանով հարցը փակվել է[2]:

Հեշտիան հարևան Թորիա և Ուջմանա գյուղերի համայնքների հետ միասին կազմակերպում է մշակութային միջոցառումներ: Այս հարցում զգալի է մայրապետների (միաբանության քույրեր) գործոնը, որոնց ջանքերի և ամերիկյան բարերարների շնորհիվ տեղում բացվել և գործում է «Կարդինալ Աղաջանյան» պատանեկան ճամբարը: Նինոծմինդայի կաթոլիկ հայերը գտնվում են Հայ կաթոլիկ պատրիարքարանի (Զմմառ, Լիբանան) ուշադրության կենտրոնում, ինչի արդյունքում վերջինիս և համայնքի միջև հաստատվել են ամուր, արդյունավետ կապեր:

[1] Մասիս, 2007, օգոստոս, թիվ 23, էջ 27:

[2] 2009թ. հուլիսի 6-ին «Նորավանք» ԳԿՀ-ի կազմակերպած կրոնափոխ, դավանափոխ հայության խնդիրներին նվիրված գիտաժողովի քննարկումներից:

***«Խաս ֆրանգներ»:*** Այսօր «խաս-ֆրանգներ» անվանվում են Ալաստան և Վարևան գյուղերի բնակիչները: Իրենք՝ ալաստանցիները, «խաս», այսինքն՝ «մաքուր, կատարյալ ֆրանգ» լինելը բացատրում են նրանով, որ երբևէ թրքախոս չեն եղել, այսինքն՝ իրենց առանձնացնում են այլ հայ կաթոլիկներից: Ոմանք այլ բացատրություն են տալիս՝ ասելով, որ իրենք միշտ հավատարիմ են մնացել Հայ կաթոլիկ եկեղեցու հայածես սովորույթներին և միշտ մերժել են հռոմեածես արարողակարգերը: Այդ պատճառով հարևան գյուղերն իրենց կոչում են «խաս ֆրանգներ»: Այս գյուղերի բնակիչները հպարտանում են իրենց «խասությամբ»: Իսկ Ախալքալաքի բնակիչները նշում էին, որ «խաս ֆրանգ»-ները տարբերություն չեն դրել առաքելական և կաթոլիկ հայերի միջև: Զուգահեռ անցկացնելով Կարնո գավառից եկած և Ախալցխայում հաստատված հայ կաթոլիկների միջև՝ նշենք, որ վերջիններիս շրջանում (օրինակ՝ ծինուբանցիները, մոխրեբցիները, սուխլիսցիները) «խաս ֆրանգ» ինքնանվանումը ևս տեղ ունի:

Հայապահպանմանը նպաստող դրական կարևոր բաղադրիչները (կրթական, ծիսական) իրենց հետ այս գյուղեր են բերել Մխիթարյան միաբանությունում, Լևոնյան վարժարանում կրթություն ստացած վարդապետները: Այս պարագայում Հայ կաթոլիկ եկեղեցու գործառույթները, հոգևորից բացի, եղել են նաև կրթական, ինչը որոշ առումով հեռու է պահել վրացանալու ճանապարհ բռնած մի քանի հարևան կաթոլիկ, բնիկ հայաբնակ գյուղերի ճակատագրի կրկնությունից:

Խոսելով նմանությունների և տարբերությունների մասին՝ փաստենք, որ դավանանքային ընկալմամբ էր պայմանավորված նաև ներքին ամուսնությունների խնդիրը, որը խիստ ար-

տահայտված էր մինչխորհրդային շրջանում:

Կարելի է պնդել, որ հարևան գյուղերի առաքելական հայերին աղջիկ տալու հարցում բավական «ժլատ» են եղել, ինչը բխում էր նաև նեղ համայնքային կյանքով ապրելու ավանդական սովորությունից. սկզբում սահմանափակվել են միայն նույնադավանի հետ ամուսնությամբ: Ներքին ամուսնությունների ավանդույթը առաքելական հայերի միջավայրի գործոն էր, որն ազգապահպան առումով բացառում էր օտարազգիների հետ ամուսնությունները: Ավանդույթը հետագայում սահուն անցում կատարեց կաթոլիկություն ընդունած հայերի միջավայր՝ նեղացնելով, ձևափոխելով դրա նախնական իմաստը, որն արտահայտվեց արդեն իսկ առաքելական հայերի հետ ամուսնության սահմանափակումով:

Իհարկե, մեր օրերում նման պատկերացումներն այլևս տեղ չունեն, դրանք վերացան դեռևս խորհրդային շրջանում՝ համայնքային կյանքից դուրս մղելով կրոնական ավանդականությամբ ձևավորված կարծրատիպերը: Սակայն երևույթը միակողմանի չի եղել. նույն կերպ առաքելականները չեն ամուսնացել հայ կաթոլիկների հետ՝ չհաշված որոշ բացառություններ: Ինչևէ, նման խնդիրներն այլևս գերակա չեն, դրանք ավելի ցայտուն արտահայտվում են օտար միջավայրում, որտեղ ներքին ամուսնությունները որոշ ժամանակով «երկարացնում» են հայկական համայնքի կյանքը:

Մյուս կողմից՝ նկատելի է, որ Ախալցխայի գյուղերից Ռուսաստան արտագաղթած հայերի շրջանում կաթոլիկ հավատքին ապավինելը մեծ տեղ ունի: Խոսքը կրկին ներքին ամուսնությունների մասին է, ինչն, իրենց հավաստիացմամբ, ոչ թե բխում

է միմյանց «լավ ճանաչելու» սկզբունքից, այլ արտահայտվում է նույնադավան լինելու հանգամանքով և հատկապես օտար միջավայրում հայ մնալու ձգտմամբ: Նշենք, որ որոշ դեպքերում Ռուսաստան արտագաղթած հայ կաթոլիկներն ամուսնանում են նաև դավանակից լեհուհիների հետ: Սա միանգամայն այլ խնդիր է և ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ այդ վայրում միևնույն համայնքի անդամներ չեն բնակվում: Ինչպես ջավախքցի մի ծերունի ասաց, ինքը հպարտ է, որ իր որդին ամուսնացել է լեհի, իր բնորոշմամբ՝ «մաքուր» ֆրանգի հետ:

Ջավախահայ կաթոլիկների մեջ նկատելի է ևս մեկ երևույթ. 1960-1970-ական թթ. Խորհրդային Հայաստանում հաստատվելուց հետո, որևէ դավանական (զուրկ են եղել կաթոլիկ մկրտությունից) համակարգի հետ կապվածություն չունենալով, զուտ ազգային ինքնագիտակցության մղումից ելնելով՝ դարձել են Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ: Ընդ որում՝ դա կատարվել է աստիճանաբար, գիտակցված և առանց որևէ պարտադրանքի, երբեմն նաև նոր շրջապատում «ֆրանգի» կերպարից և պիտակավորումից վերջնականապես ձերբազատվելու համար: Սակայն շատերն էլ փորձել են թաքցնել իրենց դավանանքային պատկանելությունը՝ խոչընդոտների չհանդիպելու համար: Նույնիսկ այսօր պատահում է, որ ընտանիքի անդամների մի մասն առաքելական, մյուս մասը՝ կաթոլիկ են լինում, բայց դա էական նշանակություն չի ունենում միջընտանեկան հարաբերություններում:

Այս երկու գյուղերի բնակիչները մշտապես դուրս են մնում մյուս հայ կաթոլիկ համայնքներում տեղի ունեցող մշակութային և հասարակական միջոցառումներից: Ընդ որում՝ երկու

գյուղերում էլ արտագաղթը մեծ չափեր է ընդունել, և գյուղացիների պնդումների համաձայն, հավանականությունը մեծ է, որ առնվազն հինգ տարի հետո ամբողջովին կհայազրկվեն[1]:

***«Գբո ֆրանգներ»:*** Ըստ Ա.Պետրոսյանի՝ Նինոծմինդայի «մշեցի ֆրանգները» սովորաբար «գբո» են կոչում այն հայ կաթոլիկներին, որոնք թրքախոս (*մեր ժամանակներում ներքոհիշյալ գյուղերի բնակիչները հայախոս են.- Ա.Ս.* ) են[2]:

«Գբո»[3] անվանվող հայ կաթոլիկները հիմնականում բնակվում են Ախալքալաքի Բավրա, Խուլգումո, Կարտիկամ, Տուրցխ, Բոգդանովկայի Ասփարա, Նոր Խուլգումա գյուղերում: Վերը նշված գյուղերի բնակիչները Ջավախք են տեղափոխվել Արևմտյան Հայաստանի Արդահան գավառի Գեոլայի հասարակության Վել գյուղից[4]:

Իսկ ինչպե՞ս են նրանք դարձել թրքախոս: Այս մասին տեղեկություններ է հայտնում Ե.Լալայանը. «*Ինչպես ծերունիները պատմում են, իրենց նախնիքը լուսավորչական հայեր են եղած և զանազան ժամանակներում այլևայլ տեղերից եկած բնակած են այս գյուղը: Անցյալ դարում Արտահանի բեկը արգելած է Վել և շրջակա հայախոս գյուղերին հայերեն խոսել և ամեն անգամ*

[1] Թե՛ Վարևանում, թե՛ Ալաստանում բնակչության մեծամասնությունը կազմում են տարեցները: Ընդհանրապես նմանատիպ իրավիճակում են գտնվում բազմաթիվ հայկական գյուղեր:

[2] *Петросян А., նշվ. աշխ.:*

[3] Համաձայն խուլգումոցի հայերի, «գբո» նշանակում է կոշտ, կոպիտ մարդ: «Գբոները» չէին ընդունում այդ, և դա բնական է, քանի որ վիրավորական երանգ ունի: Այսօր էլ Հայաստանում կան գյուղեր, որոնց բնակիչները միմյանց տարբեր անվանումներով են բնութագրում:

[4] *Լալայան Ե.*, Երկեր, հատոր Ա, Երևան, 1983, էջ 85:

*խոսելիս 50 բաղդադ տուգանք է առած»*[1]: Հետագայում Վելում հաստատվում է մի կապուցին քահանա, որը և աստիճանաբար գյուղացիների մեջ կաթոլիկություն է տարածում:

Փաստորեն, թուրք բեկի ճնշմամբ ու մահվան սպառնալիքով վելցիներն սկսում են թուրքերեն խոսել, ինչն աստիճանաբար նրանց իսլամացման է տանում: Դրա վառ ապացույցն է տասնամյակներ անց Վելում մնացած հայ կաթոլիկ փոքրաթիվ համայնքի բռնի թուրքացումն ու իսլամացումը[2]: Սակայն հայ մնալու միջանկյալ գործոն է հանդիսացել կաթոլիկությունը, որովհետև Վելում լուսավորչական քահանա չի եղել:

Որպես ցեղասպանության դրսևորում՝ թուրքերեն խոսելու պարտադրված սովորությունից ձերբազատվելու համար պահանջվեց երկար ժամանակ: Ջավախքում հաստատվելուց հետո էլ երևույթն առկա էր, քանի որ վելցիների գիտակցությունում դեռևս կար թուրքական սպառնալիքի գործոնը[3]:

Բայց պետք է նկատել, որ ավելի շատ թուրքերեն խոսում էին մինչխորհրդային շրջանում, կրթական համակարգի բարելավմանն ու գրաճանաչությանը զուգահեռ՝ երևույթն արմատապես նահանջեց, և աստիճանաբար տիրապետող դարձավ հայերենը: Դրան նպաստեց նաև հայկական միջավայրը, որում որոշիչ դեր կատարեցին ուսուցիչները և քահանաները: Նրանց շնորհիվ 19-րդ դ. վերջին նոր սերունդն իրեն սկսեց անվանել «հայ կաթոլիկ»[4]՝ աշխատելով սովորել նաև մայրենի լեզուն: Ըստ

[1] Նույն տեղում, էջ 85:

[2] *Յակոբեան Պ.*, նշվ. աշխ., էջ 86:

[3] *Սիմավորյան Ա.,* Ախալքալաքի և Նինոծմինդայի հայ կաթոլիկների մասին, Հանրապետական, թիվ 5, Երևան, 2009, էջ 10:

[4] Երվանդ Լալայանը նշում է, որ 19-րդ դ. Տուրցխի *հայ կաթոլիկն* իրեն ուղղափառ էր անվանում: Դա, հավանաբար, վրացիների ճնշմամբ է կատարվել: Տե՛ս *Լալայան Ե.,* նշվ. աշխ., էջ 87:

Ս.Զուռնաջյանի, Խուլգումոյի միջնակարգ դպրոցում հայոց լեզվի ուսուցման հետ կապված մեծ դժվարություններ են եղել: Հաջողության հասնելու համար համընդհանուր ջանքեր և հետևողական աշխատանք էր հարկավոր, մինչև որ երեխաները սովորեին անաղարտ մայրենին[1]:

Դժվարությունները վաղուց հաղթահարվել են[2]: Որքան էլ մեր ժամանակներում փորձում են նրանց «թրքախոս հայ կաթոլիկներ» անվանել, նշենք, որ խնդիրն օրակարգից դուրս է եկել, և չպետք է անցյալի իրողություններով գնահատել այսօրվա հակառակ պատկերը:

Սակայն ոմանք, չգնահատելով պատմական իրողությունները, հայկական գիտակցություն ունեցող այս հատվածի վերաբերյալ իրենց ուսումնասիրություններում ծայրահեղ մոտեցումներ են ցուցաբերում: Մասնավորապես, նույն Ա.Պետրոսյանը, միանգամայն կեղծ և անտրամաբանականորեն, գրում է. *«Չի բացառվում նաև, որ «զրո» ֆրանգները (Կարտիկամի, Տուրցխի, Բավրայի, Խուլգումոյի բնակիչները) դրանք կաթոլիկություն ընդունած թուրքեր են, որոնք հետագայում սկսել են իրենց կոչել հայեր»[3]:*

Այս ամենը խիստ զայրացրել էր խուլգումոցիներին: Վերջիններս նշում էին, որ չունեն իրենց պաշտպանելու համար անհրաժեշտ լծակներ: Պատահական չէ, որ այս նյութը դարձել է ադրբեջանական համացանցային «ֆորումների» քննարկման առարկա[4]:

[1] *Զուռնաջյան Ս.*, Ջավախք, Ժամանակագրություն, Երևան, 2002, էջ 471:
[2] Ինչպես ականատես եղանք, հայերենին զուգահեռ երբեմն թուրքերեն խոսում էին միայն տարեցները, իսկ երիտասարդների մեջ այդ սովորույթն այլևս չկա:
[3] *Петросян А., նշվ. աշխ.:*
[4] http://www.azdiaspora.org/forum/index.php?topic=552.0:

Հայկական գիտակցությունը մշտապես հաղթողի դերում է, և այսօրինակ թշնամական կեղծ «եզրահանգումները» չեն կարող անջրպետ առաջացնել Ջավախքի հայության դավանանքային հատվածների միջև, որն այնքան ձեռնտու կլիներ վրացական կողմին:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում խուլգումոցիների այն պնդումը, որ Ջակ և Վաչիան հայկական գյուղերի բնակիչները եղել են կաթոլիկներ, բայց այսօր հրաժարվում են ընդունել այդ փաստը: Վաչիան գյուղի պարագայում դա գուցե հնարավոր է, քանի որ կաթոլիկ Վարևան գյուղի բնակիչները միևնույն վայրից են գաղթել և հետագայում առանձնանալով՝ հիմնել իրենց բնակավայրերը: Կարող էր պատահել, որ մի քանի կաթոլիկ ընտանիք լուսավորչական հարազատներից չբաժանվելու համար ցանկացել է միևնույն վայրում ապրել: Սակայն պատմական որևէ հիշատակության չենք հանդիպում, որն ապացուցեր նախկինում այս երկու գյուղերի կաթոլիկ լինելու խուլգումոցիների վարկածը: Ե.Լալայանը, նշում է, որ վարևանցիք Էրզրումի Թվանջ գյուղից են և թե՛ հանդերձներով, թե՛ նիստ ու կացով չեն տարբերվում վաչիանցի հայ լուսավորչականներից, որոնց հայրենակիցն են[1]:

Այսօր արդեն Երևանում ուսանող ջավախքցի կաթոլիկ հայ ուսանողներն անկաշկանդ մտնում են առաքելական եկեղեցի, մոմ վառում, իսկ, օրինակ, Տուրցխի հարևան հայ առաքելականների գյուղերից հասնում են Սուրբ Մարիամ Աստվածածին և աղոթք անում, որովհետև իրենց գյուղերում եկեղեցի չկա[2]:

Այս գյուղերում մինչև 1950-ական թթ. ընդունված էր

[1] *Լալայան Ե.,* նշվ. աշխ., էջ 84:

[2] *Յակոբեան Թ.*, Կաթոլիկ հայերը «Օրթոտոքս ժողովրդավարական» Վրաստանում, http://www.aztagdaily.com/Archive/11-06-07/html/page4.htm

ամուսնանալ և՛ գյուղի, և՛ դրանից դուրս բնակվող կաթոլիկների հետ: 68-ամյա Պողոս Ալբերտյանը հիշում է, որ իր երիտասարդության տարիներին տարբերություն էր դրվում. «*Մեր նախնիները եկել են Էրզրումի Վել գյուղից և Արտահանից: Այնտեղ էլ մերոնք եղել են կաթոլիկ: Նախկինում շատ քիչ էին դեպքերը, երբ հայն ու ֆրանկը աղջիկ տան, առնեն: Հիմա թեև որոշ բաներ մնացել են, բայց էլ առաջվանը չէ: Հայաստանն էլ տարբերություն չի դնում: Երբ օգնություն են ուղարկում, բաժանում են բոլորին՝ լինի ֆրանկ, թե հայ*»[1]:

Գրեթե ամեն տարի խուլգումոցիները մեկնում են Արևմտյան Հայաստան՝ թուրքերի կողմից ավերակ դարձված իրենց հայրենի Արդահանի Վել գյուղատեղի:

Գյուղատնտեսությամբ մի կերպ գոյատևող և եկամտի այլ աղբյուր չունեցող Խուլգումո և Տուրցխ գյուղերին երբեմն օգնություն է ուղարկում «Կարիտաս» կազմակեպությունը, այն էլ ալյուրի, շաքարի, ձեթի և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների տեսքով:

Ցավոք, արտագաղթի հետևանքով հավասարապես տուժել են գրեթե բոլոր գյուղերը, և եթե այն շարունակվի, հայ կաթոլիկ գյուղական համայնքների մեջ արտագաղթի բարձր ցուցանիշով հատկապես Տուրցխն ու Խուլգումոն կհավասարվեն Ալաստան և Վարևան գյուղերին:

***Վրացախոս հայ կաթոլիկներ:*** Բավական հետաքրքիր խումբ են, այսպես կոչված, «կաթոլիկ վրացիները»՝ նախկին հայ կաթոլիկները, որոնք բնակվում են Ասպինձայի շրջանում: Քանի

[1] Նույն տեղում:

որ Վարգավ և Խզաբավրա գյուղերը գտնվում էին Ախալքալաքի գավառում, փորձենք ներկայացնել նրանց վրացացման պատճառները։

***Վարգավ:*** Ասպինձայի կազմում գտնվող գյուղ է, որը հարևան է հայ կաթոլիկ Վարևան և Ալաստան գյուղերին։ Բնակիչները բնիկ հայեր էին։ Հայտնի է, որ 17-18-րդ դդ., մահմեդականացմանն ընդդիմանալու համար, այս կողմերում հաստատված, արևմուտքից եկած կրոնական քարոզիչների միջոցով ընդունել են կաթոլիկություն, որի արդյունքում կաթոլիկացել են Վարգավի, ինչպես նաև ներկայումս անմարդաբնակ Բնելա գյուղերի հայ բնակիչները։ Հետագայում վարգավցի հայ կաթոլիկները, պայմանավորված վրացիների ներհոսքով, վրացական միջավայրին են «զոհաբերել» մայրենի լեզուն[1]։

Ե.Լալայանը, որը ժամանակին հետաքրքիր հետազոտություն էր կատարել Ջավախքի գյուղերում, նշում է. «*Վարգավցիք և խզաբավրացիք բնիկներ են։ Սրանք վաղուց մոռացած են իրենց մայրենի լեզուն և խոսում են վրացերեն։ Եվ թեպետ ընդունած են վրացական սովորություններ, բայց և այնպես ընտանեկան կյանքը հայկական է*»[2]։

Դա հաստատում են նաև սկզբնաղբյուրները։ Համաձայն 1886թ. անցկացված ընտանեկան ցուցակագրման, Վարգավ գյուղի կաթոլիկների լեզուն եղել է վրացերենը, սակայն էթնիկ պատկանելության դիմաց գրվել է հայ։ Օրինակ՝ Լազարովները, Դաթաևները, Թարխանովները, Թամազովները, Շաբերիձեները։

[1] *Կարապետյան Ս.,* նշվ. աշխ., էջ 476։

[2] *Լալայան Ե.,* նշվ. աշխ., էջ 84։

Միայն Դավլաշերիձե ընտանիքն է իրեն վրացի համարել[1]:

Ինչպես երևում է, Վարգավի բնակչության մեծ հատվածի էթնիկ ինքնագիտակցությունը դեռևս պահպանվում էր, այլապես ինչպես բացատրել այն, որ իրենց հայ են համարել: Հաշվի առնելով, որ այդ թվականին անցկացված մարդահամարի ժամանակ ճնշումներ են գործադրվել հայ կաթոլիկների վրա և տարբեր միջոցներով փորձել են նրանց վրացի գրանցել, ինչպես Սմբաթովի պարագայում էր, ակնհայտ է դառնում, որ Վարգավի բնակչության գերակշռող մասն ընդդիմացել է վրացի աշխարհագիրներին և ներկայացել որպես հայ: Նույն պատկերն էր նաև Խզաբավրայում:

Ախալքալաքի և Նինոծմինդայի հայ կաթոլիկների ժողովրդապետ Անդրե Եանիցկին, ընդարձակելով վրացացած հայ կաթոլիկների աշխարհագրական ընդգրկումը, հավաստում է, որ այդ գյուղերի (Ասպինձայում Խզաբավրա, Վարգավ, Ադիգենում՝ Արալ, Ուդե, Ախալցխայում՝ Իվլիտ) բնակիչները նախկին հայ կաթոլիկներ են, սակայն այսօր այդ մարդիկ ներկայանում են որպես վրացի կաթոլիկներ: Միայն ազգանուններից է հասկացվում, որ հայեր են եղել. Գալուստաշվիլի, Մխիթարաշվիլի և այլն: Բավական է ասել, որ այս գյուղերում լատինական ծես է անցկացվում՝ վրացերենով: Սակայն, ինչպես նշեց մեր զրուցակիցը, իրենք «էթնիկ ծագման հարցերով աշխատում են չզբաղվել և ըմբռնումով են մոտենում պատմական ժամանակաշրջանում տեղի ունեցած երևույթներին»[2]:

Քանի որ Խզաբավրա և Վարգավ գյուղերը համեմատաբար

---

[1] *Топчишвили Р.А.,* Посемейные списки Тифлисской губернии 1886г. как этнографический источник // СЭ, 1989, Москва, N 6, с.114:

[2] *Սիմավորյան Ա.,* Հարցազրույց հայր Եանիցկու հետ, Դաշտային հետազոտությունների տետր, Տուրցխ, հունիս 18, 2009:

մոտ են գտնվում հայ կաթոլիկ գյուղերին (Ալաստան, Վարևան), դրանց հետ շփումները մշտապես սերտ են եղել: Ալաստան և Վարևան գյուղերի բնակիչները մեզ հետ զրույցում նշում էին, որ իրենք հայեր էին և մինչև 1930-ական թվականները հայերեն էին խոսում, և նույնիսկ «Գովեցյալ Հիսուս» ողջույնի խոսքին գրաբարյան ձևով պատասխանում էին. «Եղիցի միշտ և յանապա»: Խնդիրն այն է, որ վարգավցիները և խզաբավրացիները հայերեն չէին խոսում: Ե.Լալայանի տեղեկությունը նրանց՝ հայերենին չտիրապետելու մասին (1890-ական թթ.) համապատասխանում էր իրականությանը: Պարզապես հարևան հայ կաթոլիկ գյուղերի բնակիչները չեն հասկացել, որ նրանց լեզվի իմացությունը՝ առանձին արտահայտությունների մակարդակով, կապված էր եկեղեցական ծիսական արարողությունների հետ, որոնք, բնականաբար, կատարվում էին հայերենով, չնայած սկզբում լատինածես էին: Այլ հարց է, թե արդյոք վրացերենին զուգահեռ ունեին «գաղտնի լեզու»՝ հայերենը, որով շփվում էին միայն տան անդամները:

Վարգավցիները, ըստ Վարևանի և Ալաստանի բնակիչների, հաճախում էին իրենց գյուղերի եկեղեցիներ: Տարբեր տարիների Խերթվիսից և այլ վայրերից Վարգավում հաստատվել էր նաև մի քանի վրացական ընտանիք, որոնք էլ խառնվել էին տեղաբնիկներին: Ի դեպ, 1910-ական թթ. Վարգավում հովվություն էր անում Կոստանդինոս Շեշաբերիձեն, որն ազգությամբ վրացի էր, և դժվար թե նրա օրոք ծիսական արարողությունները կատարվեին հայերենով: Օբյեկտիվորեն, բնիկ հայ կաթոլիկների վրացացման նախադրյալները ձևավորել են հատկապես վրացի լատինածես և վրացամետ որոշ հայ կաթոլիկ հոգևորականները:

Պատահական չէ, որ հետագայում վրացական իշխանությունները Վարգավը մտցրին նորաստեղծ Ասպինձայի շրջանի կազմի մեջ[1] (գյուղն ընդամենը երեք-չորս կիլոմետր է հեռու հայկական գյուղերից), և այդպիսով վրացիներն իրենց վերահսկողության տակ վերցրին այն՝ կտրելով հայկական շրջապատից և ինտեգրելով վրացականին։

Ասպինձայի շրջանում հիմնականում կենտրոնացված էին վրացական գյուղեր, բացի Դամալայից, և սահմանազատումն աշխատեց հօգուտ վրացիների։ Վարգավցիների մեջ կրկին արթնացավ էթնիկ վրացի լինելու հանգամանքը, թեև մի քանի ընտանիքների մայրեր սերում էին հարևան հայ կաթոլիկ Ալաստան գյուղից, որոնք ամուսնացել էին դեռ 1920-ական թթ.։ Մի խոսքով՝ այստեղ բնակվում են վրացախոս հայ և այլ վայրերից այստեղ տեղափոխված վրացի կաթոլիկներ։ Հավելենք նաև, որ այսօր Վարգավ գյուղը ներկայացված է որպես վրացի կաթոլիկների համայնք։

***Խզաբավրա:*** Պատմական փաստերի համաձայն, գյուղի բնակիչներն առաքելադավան էին և Օսմանյան կայսրության գերիշխանության ժամանակ իսլամացումից խուսափելու համար ընդունել են կաթոլիկություն։ Ազգային եկեղեցուց անջատվելու հետևանքով խզաբավրացիները մեկուսացել էին հայության հիմնական զանգվածից, ինչը և հնարավոր էր դարձրել վրացախոսությունը[2]։

Խզաբավրացիների շրջանում ներքին ամուսնությունների սովորույթը ևս մեծ տեղ ուներ, ինչը հատուկ էր նաև հայ կաթո-

[1] Ասպինձայի շրջանը հիմնվել է 1961թ. սեպտեմբերին։

[2] *Կարապետյան Ս.,* նշվ. աշխ., էջ 234։

լիկներին և ձևավորվել էր դավանանքային աշխարհայացքով: Այն վերջիններիս հեռու էր պահում վրաց ուղղափառներից, սակայն ժամանակի ընթացքում այդ սովորույթն այլևս տեղայնական չէր: Անցյալում խզաբավրացիների հայ լինելու հիշողությունը կամ թույլ արտահայտված ազգային ինքնագիտակցությունը հանգեցրեց նրան, որ խնամություն էին անում հայ կաթոլիկների հետ, ինչը չնչին տոկոս էր կազմում, իսկ այսօր ընդհանրապես բացակայում է: Նրանք ևս ժխտում են, որ հայ են: Պատահական չէ, որ վերջին տարիներին խզաբավրացիներն ընդդիմացել են մի շարք վրացական թերթերում իրենց հայկական ծագման վերաբերյալ հնչած կարծիքներին:

2007թ. «Ասավալ-դասավալի» վրացալեզու պարբերականի 13-րդ համարում տեղ է գտել 87-ամյա խզաբավրացի Ստեփանե Մամուկաշվիլու հոդվածը: Այստեղ վերջինս ժխտում է, որ իրենք հայկական ծագում ունեն՝ բերելով մտացածին, կեղծ փաստարկներ. *«Այն ժամանակ, երբ կաթոլիկ խիզաբավրացիները ժամերգություն-պատարագները այլ գյուղերում էին կատարում, այդ ծեսի կատարումը հայ կաթոլիկ քահանաները յուրացրին, որոնք մեծ չարություններ կատարեցին: Գրել-կարդալ չիմացող վրացիներին, երեխային կնքելու ժամանակ անունը հայերեն էին գրում. Վելիջանաշվիլիներին՝ Վելիջանով գրեցին, Թամազաշվիլիներին՝ Թամազով, Մամուկաշվիլիներին՝ Մամուկով և այլն: Երբ Խիզաբավրայում եկեղեցու կառուցումը ավարտվում էր, քարի ու փայտի վարպետները հայեր էին, որի պատճառով այդ կաթոլիկ տաճարը ուրիշ շատերի նման հայերին վերագրեցին»,- ցավում է պարոն Ստեփանեն»*[1]:

[1] Грузинский маразм (часть 5), http://bagin.info/default.asp?Lang=_Ru&NewsID=626&SectionID=-1&PagePosition=1&search=%D0%BC%D0%B0%D1%80%D0%B0%D0%B7%D0%BC&mode=allwords

Նախ՝ Խզաբավրայի կաթոլիկ քահանաները, բացի Հովհաննես Աստվածատուրովից (1866թ.), Կոստանդինոս Շեշաբերիձեից (1915թ.) և Պաոլո Սիեպանեկից (1961-1999թթ.), գրեթե բոլորն էլ նույն գյուղի հայեր են եղել: Հետագայում վրացամետ լինելու պատճառով իրենց ազգանվան վերջավորությունը փոխել են վրացականով: Օրինակ, գյուղի քահանան Վարձելյան էր, հետագայում, պայմանավորված ռուսահպատակությամբ, դարձել էր Վարձելով, այնուհետև՝ Վարձելաշվիլի: Ահա թե ինչ են պատմում սկզբնաղբյուրները նրա մասին. «...կաթօլիկ հայ էր եւ Վարձելեան եւ հայ անունով էլ քահանայ ձեռնադրուեց, բայց այժմ նոյն մարդը շապիկը փոխելով, վրացի է անուանում իրան»[1]: Եվ եթե հայեր չէին խզաբավրացիները, ապա ինչպե՞ս կարող է պատահել, որ Պոլսի, Կովկասի և Ալաստանի հայ կաթոլիկներն այդ գյուղի եկեղեցաշինության համար գումար հանգանակեին, երբ դրա կարիքն այնքան շատ ունեին: Վատիկանյան փաստաթղթերում Խզաբավրան Սամցխե-Ջավախքի հայ կաթոլիկ գյուղերի հետ միասին նշվում է որպես հայկական[2]:

Ասպինձայի հայաբնակ Դամալա և Ախալքալաքի շրջանի Ալաստան գյուղերի հայ բնակիչները փաստում են, որ երբ խզաբավրացիներին հայ ես ասում, առարկում են և նշում վերոբերյալ Մամուկաշվիլու տեսակետը: Քչերն են ընդունում իրենց հայկական ծագումը: Սակայն հայկական միջավայրը չի մոռանում, որ նրանք հայկական ծագում ունեն և մշտապես, շփման

[1] «Մշակ», 1900, N124, էջ 2, մեջբերված է *Կարապետյան Ս.,* նշվ. աշխ., էջ 236:
[2] Տե՛ս Directorium officii divini pro doecesi Tiranspolensi in Annum Domini, 1866, Hierarchia Romano-catholica, http://www.petergen.com/bovkalo/sp/tyraspol1866.html:

ժամանակ, հիշեցնում է նրանց էթնիկ ծագման մասին. «Մեր մասին ասում են, որ մենք հայ ենք, ես շատ հաճախ եմ լսում այդ մասին»,- նշում է վրացի կաթոլիկ մի կին[1]:

Վերջին տարիներին, վրաց–ռուսական քաղաքական սրման համատեքստում, ի հայտ եկան նոր իրողություններ: Վրացացած հայերի մի քանի սերունդ վերականգնեց հին հայկական ազգանունները՝ գլխավորապես Թբիլիսիի և Սամցխե–Ջավախքի վրացախոս Հայության շրջանում: Հայկական ազգանունները վերականգնել ցանկացողները բավական շատ են, սակայն վախենում են վրացիների ոչ ադեկվատ գործողություններից[2]:

Թեև փաստեր չունենք, բայց պետք է որ վրացական իշխանությունները (մենշևիկյան և խորհրդային) նույնպես մշտական ուշադրության կենտրոնում պահեին Սամցխե-Ջավախքի և Վրաստանի տարածքում վրացացած հայության տարբեր շերտերի մեջ տեղի ունեցող գործընթացները, հնարավոր է՝ փորձել են կասեցնել վերջիններիս ազգային ինքնագիտակցության որևէ դրսևորում՝ հետագայում բազմաբնույթ խոչընդոտներից խուսափելու համար:

Որպես ազգային ինքնագիտակցության բռնի արգելակման միջոց վրացական իշխանությունների համար հզոր գործոն է ուղղափառացումը, քանի որ այդ երկրում ուղղափառ լինելը

[1] *Джавахашвили М.*, նշվ.աշխ., էջ 112:

[2] 2002թ. Վրաստանում անցկացված մարդահամարի տվյալներով այդ երկրում ապրում է 250 հազար հայ: Ըստ «Ռեգնում» լրատվական գործակալության, Վրաստանում բնակվում է նաև 150 հազար վրացացած հայ, որոնք խորհրդային իշխանությունների և Վրաստանի անկախության առաջին տարիներին, իշխանությունների ճնշմամբ, փոխել են ազգանունները վրացականով: Գլխավորապես վրացացել են Թբիլիսիի, Կախեթի շրջանի տասնյակ գյուղեր: Սամցխե-Ջավախքում վրացացել են Վարգավը և Խզաբավրան, իսկ Ադիգենի շրջանում՝ Բոլաջուր, Աբասթուման, Արալ, Ուդե գյուղերը: Տե՛ս *Огрузинившиеся армяне возвращают свои армянские фамилии* http://www.regnum.ru/news/district-abroad/georgia/727399.html:

համազոր է վրացի լինելուն:

Կարծում ենք, որ այս խումբը «կորսված սերունդ» է, որի հետ աշխատելը դժվարին խնդիր է: Փաստորեն, այս խմբում գոյություն ունի երկակի ինքնագիտակցություն, ընդ որում՝ հայկականը շատ ցածր մակարդակի է: Եթե բռնի իսլամացած հայերի սերունդների որոշ մասի էթնիկ ինքնագիտակցության դրսևորումները կապված են ցեղասպանության ծանր հիշողության հետ և հայությանը դառնալու գործոն են, ապա «վրացացած» կաթոլիկների պարագայում դա բացակայում է, և դժվար է ասել, թե որ գործոններն են, որ կարող են ազդեցիկ, որոշիչ լինել կորսված արմատներին վերադառնալու համար: Դա պետք է ինքնաբուխ լինի, և որքան «ճնշումներ» լինեն, այնքան հաստատակամ կմնան վրացական ծագման տեսակետին:

Այնպես որ՝ հարցը մեզանում ուսումնասիրված չէ և լուրջ հետազոտման կարիք ունի, հատկապես այսօր, երբ Ախալցխայի «վրաց կաթոլիկ»-ների շրջանում ուղղափառացման (դրանից բխող վրացականացման) քայլեր են կատարվում, իսկ դա ավելի է հեռացնելու նրանց առանց այն էլ երերուն ինքնագիտակցությունից:

Եթե Վարգավ եւ Խզաբավրա գյուղերը զերծ են մնում ուղղափառացման «հարվածներից», ապա հակառակ պատկերն է Ախալցխայի, Ադիգենի վրացացած հայ կաթոլիկների շրջանում, որոնց դավանափոխության գործընթացը մեծ չափերի է հասնում: Այդ մասին նշել են նաև Վատիկանի ներկայացուցիչները[1]: Իրադրությունն ավելի պատկերավոր նկարագրելու

[1] *Թամունա Ուչիձե*, Արևմտյան Վրաստանի կաթոլիկների եպիսկոպոսական առաջնորդական տեղապահ պադրե Բրազանտինին՝ կրոնական փոքրամասնությունների իրավունքների խախտման մասին http://hetq.am/am/society/georgia-catolic/:

համար բերենք, այսպես կոչված, «վրացի կաթոլիկների» վերաբերյալ մի քանի փաստ հայ տեղաբնիկների վկայմամբ:

*«Իվլիտայի Աստվածամոր եկեղեցին մեր ընտանիքում համարվում էր ամենազորավորը: Ես դեռ փոքրուց շատ եմ գնացել այնտեղ, սակայն այն ժամանակ դա կաթոլիկ հայերի եկեղեցին էր, և վրացիներն այնտեղ չէին էլ գնում: Դե, ինչպես ես իմացել եմ մեր մեծերից, Ախալցխայի շրջանում Իվլիտան, ինչպես նաև Աղիգենում Ուդեն և Արալը, կամ էլ Խիզաբավրան (գյուղ Ասպինձայի շրջանում) եղել են կաթոլիկ հայաբնակ գյուղեր, սակայն ներկայումս դրանք համարվում են կաթոլիկ «վրացական», և թե դա ինչպես տեղի ունեցավ, ես մինչև հիմա չեմ էլ հասկանում»,- ասում է 73-ամյա տիկին Լուսինեն և շարունակում, որ «վրաց կաթոլիկ» հասկացություն այս տարածաշրջանում իրականում չկա: Պարզապես նրանք այն հայերն են, ովքեր ժամանակի ընթացքում այս կամ այն պատճառով, կամ էլ չդիմանալով վրացիների ճնշումներին, «փոխել» են ազգությունը և այժմ արդեն կոչվում են «վրացիներ»: Այդ պատճառով էլ, առանց մեկնաբանելու, ուղղափառ վրացիները «վրացի կաթոլիկներին» կոչում են դավաճաններ և վերաբերվում ընդգծված արհամարհանքով: Իսկ «վրացի կաթոլիկներն» էլ, որպեսզի դուրս գան այս իրավիճակից, ստիպված են առաջնորդվել «Հռոմի պապից էլ կաթոլիկ» ասացվածքով և իրենց ձևացնել ավելի մոլեռանդ ազգայնական վրացիներ»:*

*«Ես ինքս անձամբ ունեմ բարեկամներ, որոնք այսօր համարվում են վրացիներ, սակայն չէ՞ որ փաստը մնում է փաստ, որ նրանց երակներում հոսում է Վարդանյանների արյունը, և ազգանունները փոխելով դարձել են Վարդենաշվիլի, չէ՞ որ չի*

*կարելի փոխել ամեն ինչ»,- ասում է Ախալցխայի բնակիչ Կարապետը և ավելացնում, որ այդ դեպքից հետո իր և իր նոր «վրացի» բարեկամների հարաբերություններն այնքան էլ դրական չեն: «Ստեղծվել է մի իրավիճակ, որ եթե ուզում ես դառնալ պաշտոնյա կամ կյանքում հասնել ինչ-որ բանի, ուրեմն պետք է դառնաս ոչ միայն «վրացի», այլև ուղղափառ, քանի որ, որքան տեսնում եմ, վրացիներն այժմ փորձում են վերացնել նախկին հայերից ձևավորված «վրացի կաթոլիկ» հասկացությունը»,-* նշում է Կարապետը[1]:

Մեր դաշտային հետազոտություններից հստակ երևում է, որ փոխընկալման հարցում առկա խնդիրները մեծ չեն՝ բացառությամբ առանձին դեպքերի: Օրինակ, կաթոլիկ գյուղից Նինոծմինդա քաղաք տեղափոխված մի տղա դպրոցում անընդհատ բախվել է իր հասցեին հնչող «ֆրանգ» արտահայտությանը և ծեծկռտուքի մեջ ընկել: Հարկ է նշել, որ ուսուցիչների դերն այս հարցում օգտակար կարող է լինել. հայ երեխաներին պետք հասկացնել, որ «ֆրանգ»-ները քրիստոնյա հայեր են, և վերաբերմունքը պետք է լինի համարժեք:

Լայն իմաստով դավանանքային տարբերությունները սահման չեն դնում հայերի միջև և նախկինի պես երկփեղկված չեն:

Այս համատեքստում ավելորդ չէ մեջբերել 2006թ. Արցախ այցելած հայր Անդրանիկ Կռանյանի հայտարարությունն այն մասին, որ կաթոլիկ և առաքելական եկեղեցիները միացնող առիթներն ավելի շատ են, քան բաժանողները, իսկ ամենաբարդ

[1] Հայկական հետքը ուղղափառների և կաթոլիկների հակադրությունում, http://bagin.info/default.asp?Lang=_Am&NewsID=684&SectionID=1&RegionID=0&Date=08/11/2009&PagePosition=52

խնդիրը բոլորովին էլ կրոնականը չէ, այլ մարդկայինը. *«Մեր աղոթքը նույնն է, նույնն են մեր պայքարը, վտանգները»*[1]:

Ինչ վերաբերում է Ջավախքի կաթոլիկ և առաքելական հայերի այսօրվա փոխհարաբերություններին, ապա դրանք բավական ամուր են. ընդհանրապես Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ դառնալու միտքը հայ կաթոլիկները դժկամությամբ չեն ընդունում: Նրանք գտնում են, որ դա ցանկացած մարդու իրավունքն է: Հայ կաթոլիկների և առաքելականների հարաբերություններն այնքան սերտ են, որ միմյանց եկեղեցի այցելությունը սովորական երևույթ է: Այս մոտեցման հիմնական պատճառն այն է, որ կաթոլիկության դավանաբանական հենքը ներկա սերունդը չի յուրացրել և, ըստ մեզ, այն կրում է «ժառանգաբար»: Իսկ ներկայում Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ դառնալու ցանկությունը (համայնքից դուրս) ոչ միայն ինքնակամության, այլև խորհրդային ժամանակների «հավատքի ճգնաժամի» դրսևորման արդյունք է:

Շատ հայեր կարծում են, թե իրենց կաթոլիկ լինելու հարցը քննարկման առարկա չէ. իրենց նախնիներն այդպես են անհրաժեշտ համարել, ուրեմն դա խոհեմ քայլ է եղել, որը զերծ է պահել նրանց իսլամացումից և նպաստել հայ մնալուն:

Իրոք, այսօր ջավախահայերի առջև ավելի զորբալ խնդիրներ են ծառացել, որոնք տարեցտարի խորանում են, իսկ լուծման բանաձևերը դեռևս աղոտ են:

Այսպիսով, կարելի է ասել, որ ազգային գիտակցությունն ու կրոնական պատկանելությունը հաճախ ներդաշն գոյատևել են Ջավախքի հայ կաթոլիկների կյանքում, որտեղ չյուրացված

[1] Հայ կաթոլիկները Արցախում, Առավոտ, 13,07, 2006:

դավանանքը մշտապես երկրորդական տեղ է ունեցել՝ հայկական գիտակցությունից հետո: Հայապահպանման տեսանկյունից ազդեցիկ և կարևոր գործոն են եղել և մնում հայոց լեզուն, հայ մշակույթը, որի կրողներն են Ջավախքի հայ կաթոլիկները, նրանց ծեքբերումներն ու նվաճումները բոլոր մակարդակներում անբաժանելի են հայությունից:

## *Հոգևոր-եկեղեցական խնդիրները*

Ներկայիս Ջավախքի (Ախալքալաքի և Նինոծմինդայի) հայ կաթոլիկ համայնքների հիմնախնդիրները, որոնք միահյուսված են այդ տարածաշրջանի ողջ հայության խնդիրների հետ, մի տեսակ ստվերի տակ են մնում և լուսաբանման կարիք ունեն: Ջավախքում այսօր հաշվվում է ավելի քան տասներեք հայ կաթոլիկ գյուղական համայնք:

Հայ իրականության մեջ կրոնի, Հայ Առաքելական եկեղեցու և հոգևորականի դերը բոլոր դարերում մեծ և որոշիչ է եղել հայ ժողովրդի կյանքի հիմնական ոլորտներում, և ասել, թե Հայ կաթոլիկ եկեղեցին նույնպես այդ գործառույթները չի կատարում, ճիշտ չի լինի: Այս ոլորտի խնդիրները, բնական է, կապված են եկեղեցու կարգավիճակի, հոգևորականության պակասի և դրանցից բխող այլ երևույթների հետ:

***Հայ կաթոլիկ եկեղեցու կարգավիճակը:*** Վրաստանում կաթոլիկ (ոչ միայն հայ, այլև վրացի, ասորի-խալդ կաթոլիկները ներառյալ) եկեղեցուն իրավական կարգավիճակ տալու շուրջ պետական և եկեղեցական մարմինների հետ բանակցությունները հենց սկզբից մտան փակուղի: Առ այսօր Վատիկանի համար դա սկզբունքային անլուծելի խնդիր է:

2002թ. Վատիկանի ներկայացուցիչներն ամեն կերպ փորձում էին իրենց եկեղեցու կարգավիճակի հարցում պարզություն մտցնել և բանակցում էին վրացական իշխանությունների հետ: Վատիկանի արտգործնախարար Ժան Լուի-Թորանը Վրաստանի նախկին նախագահ Էդ.Շևարդնաձեի հետ Թբլիսիում պետք

է ստորագրեր համաձայնության պայմանագիր, որով կլուծվեր Հռոմեական կաթոլիկ եկեղեցու կարգավիճակի հարցը Վրաստանում: Սակայն ՎՈՒԵ (Վրաց Ուղղափառ եկեղեցի) ճնշմամբ Շևարդնաձեն վերջին պահին հրաժարվեց ստորագրել: Իլյա Երկրորդը հայտարարեց, որ Վրաստանի և Վատիկանի միջև միջպետական համաձայնագրի ստորագրումը չի բխում Վրաստանի և ՎՈՒԵ շահերից, և այն իրենց համար անընդունելի է:

Այդ օրվանից ՎՈՒԵ-ի և Վատիկանի հարաբերությունները ծայր աստիճան լարվեցին: Իրավական կարգավիճակի բացակայության պատճառով ՎՈՒԵ-ն զավթեց Վրաստանի հյուսիսում գտնվող Քութայիսի և Գորիի Հռոմեական կաթոլիկ եկեղեցիները: Մինչև այժմ էլ շարունակում են ոտնահարվել կրոնական փոքրամասնությունների իրավունքները, որից հավասարապես տուժում են կրոնական բոլոր ուղղությունների ներկայացուցիչները: Մասնավորապես, 2006թ. մի քանի անգամ հարձակում կատարվեց Թբիլիսիի կաթոլիկ ասորիների վրա[1]: Այս ամենից ելնելով՝ Վրաստանում կաթոլիկ հոգևոր գործունեություն ծավալելը Վատիկանի համար իրավական տեսանկյունից խիստ սահմանափակվեց:

Նմանատիպ խնդիր կարող է առաջանալ նաև հայ կաթոլիկների պարագայում, քանի որ Վրաստանում Հռոմեական կաթոլիկ եկեղեցու իրավական կարգավիճակով է պայմանավորված Հայ կաթոլիկ եկեղեցու ակտիվ գործունեությունը: Սակայն, ինչպես երևում է, այդպիսի ճնշում հայ կաթոլիկների վրա դեռ չկա (բացառությամբ 1995թ. Հեշտիայի դեպքի), քանի որ

[1] Тбилиси: ассиро-католики опасаются погромов, 20.10.2006, http://www.blagovest-info.ru/index.php?ss=2&s=3&id=9626:

վրացական կողմը Ջավախքի հայությանը դիտում է մեկ շրջանակի մեջ՝ տարբերություն չդնելով այս կամ այն դավանանքային ուղղության հետևորդների միջև: Բայց և այնպես, Հայ կաթոլիկ եկեղեցին ևս սահմանափակ իրավունքներով է գործում: Այսինքն՝ կարող է պատահել, որ նրա եկեղեցիները մի օր հայտնվեն «վիճահարույց» կառույցների շարքում:

Միևնույն ժամանակ, խնդրի հրատապությունն, այլոց մեկնությամբ, կապված է հայերի հետ: Այսպես, կրոնական հարցերով Վատիկանի դեսպան *(Ambassadeur du Vatican auprès des trois républiques du Sud-Caucase)* Գուժերոտին նշում է. *«Հարցի սրացումը կապված է հատկապես հայերի հետ: Վրացիների համար խնդիրը չորս-հինգ եկեղեցիներին (Հայ Առաքելական եկեղեցին, Ռուս Ուղղափառ եկեղեցին, Հռոմեական Կաթոլիկ եկեղեցին և այլն.* ընդգծումը մերն է- *Ա.Ս.) կարգավիճակ տալը չէ, այն ընդգծված էթնիկ բնույթ ունի»*[1]:

Եթե Վատիկանը կարողանար հաջողության հասնել, անկասկած, դրանից կարող էր օգտվել նաև Հայ Առաքելական եկեղեցին՝ ներկայացնելով իր համար կարևոր խնդիրները: Կարծում ենք՝ Հռոմեական կաթոլիկ եկեղեցու և Հայ Առաքելական եկեղեցու համատեղ աշխատանքներն այս ուղղությամբ կարող են այլ զարգացումներ ունենալ, որն, անշուշտ, կնպաստի երկու հարանվանությունների սեփականություն հանդիսացող եկեղեցիների և նրան պատկանող գույքի պաշտպանվածությանը:

ՎՈՒԵ-ն, հավանաբար, հաշվի է առել, որ դրանցից մեկին իրավական կարգավիճակ տրամադրելուն կհաջորդի մյուսների արդարացի պահանջը: Այս անկայուն իրավիճակը թույլ է տալիս, որ վրաց հոգևորականությունը զավթի Հայ Առաքելական,

[1] *Florence Mardirossian*, Géorgie: l'Eglise catholique privée de statut juridique, 18/07/2005, http://www.caucaz.com/home/breve_contenu.php?id=228:

միևնույն ժամանակ՝ Հռոմեական կաթոլիկ եկեղեցիները: Մյուս կողմից՝ այդ երկրում սահմանափակվում է նոր եկեղեցիների կառուցումը, որից զրկված են նաև մի քանի հայ կաթոլիկ համայնքներ:

Վրաց ուղղափառ եկեղեցու դերն այնքան մեծ է Վրաստանում, որ ցանկացած, այդ թվում և քրիստոնեական ուղղություն «աղանդ» է դիտվում: Այլ կրոնների նկատմամբ թշնամական տրամադրություններն անգամ Վրաստանում հրատարակվող ուսումնական գրքերում են տեղ գտնում, այլ լեզվով հրատարակվող և պահպանված քրիստոնեական գրականության մեծ մասն առանձին դեպքերում նույնիսկ այրել են[1]:

ՎՈՒԵ հատուկ, կարելի է ասել՝ սահմանադրական կարգավիճակն ամրագրված է 2002թ. հոկտեմբերի 14-ին ստորագրված, այսպես կոչված, Կոնկորդատով (պաշտոնապես՝ Վրաստանի պետության և Վրաստանի առաքելական ինքնիշխան ուղղափառ եկեղեցու միջև սահմանադրական համաձայնագրով): Հատկանշական է, որ համաձայնագրի ստորագրման նախապատրաստության առնչությամբ Վրաստանի խորհրդարանը հատուկ օրենք է ընդունել «Վրաստանի սահմանադրության մեջ փոխություններ և լրացումներ կատարելու մասին», որով սահմանադրության 9-րդ հոդվածում հայտնվեց ՎՈՒԵ-ի հատուկ կարգավիճակը կանոնակարգող 2-րդ կետը[2]:

«Վարդերի հեղափոխությունից» հետո կրոնական ոլորտում իրավիճակն սկսեց փոխվել, սակայն, ակնհայտորեն, ոչ բավարար չափով: 2005թ. ապրիլի 5-ին խորհրդարանը փոփոխություններ կատարեց Վրաստանի քաղաքացիական օրենսգրքի 1509 հոդ-

[1] Роль православия в государствах и обществах Грузии и России, Тбилиси, 2004, с. 94-95.

[2] *Մինասյան Ս.,* Վրաստանի էթնիկական փոքրամասնությունները, Երևան, 2006, էջ 71:

վածում, որոնց համաձայն՝ կրոնական կազմակերպություններին, առաջին անգամ վրացական պետության պատմության մեջ, որպես մասնավոր իրավունքի շահույթ չհետապնդող իրավաբանական անձեր գրանցվելու հնարավորություն տրվեց: Չնայած դրան, մի քանի կրոնական միավորման գրանցման հարցը դեռևս լուծված չէ, քանի որ, անընդունելի համարելով դրանց՝ որպես հիմնադրամ կամ միություն գործելու հնարավորությունը, մանավանդ, երբ Վրաստանի ուղղափառ եկեղեցին հանրային իրավունքի իրավաբանական անձ է, Հռոմեական կաթոլիկ եկեղեցին, Հայ Առաքելական եկեղեցին եւ Լյութերանական-ավետարանչական եկեղեցին հրաժարվում են մասնավոր իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակից: Համապատասխանաբար, նրանք պահանջում են կամ կրոնական միավորումների մասին հստակ օրենքի ընդունում, կամ յուրաքանչյուր կրոնական համայնքի հետ առանձին համաձայնագրի ստորագրում (Կոնկորդատի օրինակով)[1]:

Այսպիսով, ստացվում է, որ բացի Վրաց ուղղափառ եկեղեցուց, մյուսները պետության առջև գոյություն չունեն. այդ կրոնական համայնքները կան, բայց դրանց իրավական ներկայությունը փաստաթղթով ամրագրված չէ: Այնպես որ՝ հարցը կարող է կարգավորվել միայն Վրաստանի օրենսդրության նոր փոփոխություններով:

***Հոգևորականների պակասի և ծիսական արարողությունների խնդիրը:*** Հայ կաթոլիկների գլխավոր խնդիրը հոգևորականի բացակայությունն է, ինչը հաստատեցին նաև համայնքները սպասարկող քահանաները: Տարբեր երկրների հայ կաթոլիկ համայնքները մշտապես բախվում են նույն խնդրին:

[1] Նույն տեղում, էջ 72:

Այսօր տասներեք կաթոլիկ գյուղ ընդամենը երեք հոգևորական ունի. զուգահեռ անցկացնելով Հայ Առաքելական եկեղեցու դավանանքին հետևող գյուղերի հետ՝ նշենք, որ նրանք անհամեմատ ավելի վատ վիճակում են. մոտ վաթսուն գյուղում հովվություն է անում ընդամենը երկու-երեք հոգի: Սա լուրջ խնդիր է երկու կողմի համար էլ: Հստակ է մի բան. ուր եկեղեցիներ և հոգևորականներ չեն գործում, ի հայտ են գալիս տարատեսակ աղանդավորական հոսանքներ, որոնք քայքայիչ ներգործություն են ունենում: Վերջին տարիներին Ախալքալաքում և շրջանի Կումուրդո (Գյումբուրդա), Սուլդա գյուղերում սկսել են գործել նաև հայ ավետարանչականները[1]: Այսօրինակ երևույթներն առնչվում են ջավախահայության հոգևոր անվտանգության հրատապ հարցին:

Հայ կաթոլիկ հոգևորականները հիմնականում պատրաստվում են Թբիլիսիում, Հալեպում, Լվովում: Քչերին է հաջողվում ավարտել և ստանալ հոգևորականի կոչում: Թբիլիսիում հոգևորականների պատրաստման համար ջանք չէր խնայում Թբիլիսիի հայ կաթոլիկների առաջնորդ (2003-2007թթ.) Էմանուել ծայրագույն վարդապետ Տապաղյանը, որը տեղի հայերից պատրաստում էր քահանաներ, որոնք սովորում էին Թբիլիսիի Սուլխան-Սաբա Օրբելիանիի անվան համալսարանում: Ուսումնառությունը վեց տարի է, երկլեզվյա ծրագրով՝ վրացերեն և ռուսերեն[2], իսկ հայ ժողովրդի պատմության, ծիսագիտության, երգի, ժամերգության դասընթացները վարում էր

[1] Armenian Evangelical Churches, Institutions, Organizations, Pastors and Christian Workers Worldwide, 2009, http://www.amaa.org/Directory%20for%20website.pdf:

[2] *Գիսանե Հովսեփյան,* Միաանակաանութի՛ւն: Հին պատգամը նորովի, Մասիս, փետրվար, 2007, էջ 17

վարդապետ Տապաղյանը մինչև Բաղդադի հայ կաթոլիկ թեմի առաջնորդի պաշտոնին նշանակվելը:

Իսկ ինչի՞ է հանգեցնում հոգևորականների բացակայությունը: Երբեմն Հայ Առաքելական եկեղեցու սպասավորների բացակայության պատճառով գյուղերի բնակիչները հարսանեկան, կնունքի և այլ ծեսերի համար դիմում են հայ կաթոլիկ եկեղեցականներին: Քանի որ երկու եկեղեցիների միջև կան որոշակի պայմանավորվածություններ, կաթոլիկ սպասավորներն այդ մարդկանց ուղարկում են Ախալքալաքի Հայ Առաքելական եկեղեցի կամ մոտակա Արագովա գյուղ: Հայ կաթոլիկ եկեղեցու հետևորդների մեջ Ջավախքում երբևէ պրոզելիտիզմի (հավատափոխության) դեպքեր չեն եղել, և պատճառն արդի իրականությունում երկու եկեղեցիների առողջ հարաբերություններն են: Ինչպես հայր Եանիցկին էր ասում. *«Նրանք չեն մտնում մեր գործերի մեջ, մենք՝ իրենց: Ամեն մեկը գիտի իր հոտի ոչխարներին և հոգ է տանում նրանց մասին»:*

Հայ կաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչներն էլ են գիտակցում այս խնդրի կարևորությունը. *«Մեր համայնքն այսօր՝ կոչումներու տագնապէն զատ երկրորդ տագնապ մը կ'ապրի, որ համայնքային վտանգուածութիւնն է, ըստ որուն՝ հայ կաթոլիկ հաւատացեալը իր Համայնքէն հեռզհետէ կը հեռանայ, յատկապէս այն երկիրներուն մէջ ուր հայ կաթոլիկ քահանայ կամ եկեղեցի կը պակսի, կամ անոր կատարած գործունէութիւնը տկար է»*[1], - ասում է կաթոլիկ վարդապետ Անդրանիկ Կռանյանը:

Ներկայումս Ջավախքի այս գյուղերը սպասարկում է

[1] *Ջուարթնոց,* Լիբանան, թիվ 20, 2009, էջ 21:

Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջանների հայ կաթոլիկների ժողովրդապետ, լեհ հոգևորական, հայր Անդրե վրդ. Եանիցկին: Այստեղ նա հովվություն է անում շուրջ քսան տարի, նստավայրն է Տուրցխը: Հայ կաթոլիկ սպասավորների խիստ պակասը հատկապես լրացվում է օտարազգի հոգևորականներով:

Բացի հայր Անդրեից, Սամցխե-Ջավախքում հոգևոր գործունեություն էր իրականացնում ևս մեկ լեհ՝ վարդապետ Հովսեփ Կորնաշևսկին (1980-1994թթ.), իսկ Թբիլիսիի և Ախալցխայի հայ կաթոլիկներին (կենտրոնը՝ Ծղալթբիլա) սպասարկում է վարդապետ Անատոլի Իվանյուկը[1]:

[1] Լեհ հոգևորականների, հատկապես Ախալցխայում հաստատված վարդապետ Անատոլի Իվանյուկի մասին բավական բացասական կարծիքներ կան: Ախալցխայի երիտասարդական կենտրոնի ղեկավար Գրիգոր Մինասյանն իր հարցազրույցներից մեկում նշում է. «Ինչ վերաբերում է կաթոլիկին ու առաքելականին՝ շատ քիչ է տարբերությունը, բացառությամբ մի քանի գյուղերի, որտեղ ծառայում են լեհ հոգևոր հովիվները: Նրանք ապազգային քարոզչություն են վարում, փորձում են ցանկացած հայկական երևույթից կտրել տեղի բնակչությանը: Կաթոլիկ գյուղերը բաժանվում են երկու հատվածի՝ Սուխլիս, Գիլարիս և ստորին շրջանի գյուղերը, որոնք սպասարկում է Մխիթարյան միաբանությունից Հայր Գրիգորը: Այլ է վիճակը Ծղալթբիլա և վերին սահմանամերձ շրջաններում. այնտեղ սպասարկում են կաթոլիկ հոգևորականները: Կաթոլիկների մեջ տարբերությունը շատ մեծ է: Տարիների ընթացքում կաթոլիկ միսիոներները մեր բնակչության մի հատվածում ներշնչում են, թե դուք հայ չեք, դուք ֆրանկ եք, դուք այլ ազգի ներկայացուցիչ եք, ձեր տերը Հռոմի պապն է… Ցավոք, մեր ժողովրդի ահագին մեծ հատված բառացիորեն ընդունեց այդ գաղափարը: Այդ կույր հավատքը մասամբ նկատվում է Ծղալթբիլա, Մոխրեբ, Ջուլղա և այլ գյուղերում, հատկապես՝ մեծահասակների մեջ: Օրինակ, առաջ այդ կաթոլիկ լեհ հոգևորականներին ինչո՞ւ էին ուղարկում, որովհետև սառը պատերազմ էր, և այդ լեհ հոգևորականների մեծամասնությունը հատուկ ծառայությունների աշխատակիցներ էին… Սառը պատերազմը վերջացավ, և այդ լեհ հոգևորականների կարիքը օրենքով պետք է չզգացվի, բայց նրանց էլի ուժեղացված ձևով պահում են: Այդ լեհ հոգևորականները պատկանում են Գյումրիի կաթոլիկական առաջնորդարանին: Գյուղերում շատ բաներ են պատմում այդ հոգևորականների մասին: Ծղալթբիլա գյուղի բնակիչներն ասում են, որ նրանցից մեկը՝ Անատոլին, շատ բացասական վարքագիծ ունի: Ասում են, որ նա նույնիսկ օղու բիզնեսով է զբաղված, հողեր է վերցրել և ամեն մի առիթ օգտագործում է, որ ժողովրդին մասնատի մնացած գյուղերից, հայության մյուս հատվածից» *(«Վաթանը արդեն գործում է Ախալցխայում»,* http://www.natnews.info/feed.php?news=552&print&output_type=txt): Ջավախքի հայ կաթոլիկների հետ շփվելիս նույն հարցն էին բարձրացնում նաև վերջիններս՝ ցանկանալով ունենալ միայն հայ հոգևորական:

Սամցխե-Ջավախքում լեհ հոգևորականների ներկայությունն ակտիվացավ նախկին Հռոմեական կաթոլիկ եկեղեցու գլուխ և Վատիկանի միապետ Հովհաննես Պողոս II պապի գահակալության տարիներին (1978-2005թթ.), որն ազգությամբ լեհ էր: Թերևս, այս հանգամանքով կարելի է բացատրել լեհ կաթոլիկների գործունեությունը Սամցխե-Ջավախքում:

Բացի լեհ հոգևորականներից, համայնքները սպասարկում է Տուրցխ գյուղի երիտասարդ վարդապետ, Իտալիայում հոգևոր կրթություն ստացած Սեդրակ Խաթերյանը: Նինոծմինդայի շրջանում հովվում է ընդամենը մեկ հոգևորական՝ Հեշտիայի վարդապետ Անտոն Անտոնյանը:

Այս երեք հոգևորականները ստիպված են սպասարկել իրարից շատ հեռու գտնվող համայնքներ, ինչը դժվարությունների հետ է կապված: Եկեղեցական արարողությունները հիմնականում կատարվում են հայկական ծեսով, անգամ այն դեպքում, երբ սպասավորներն այլազգի են: Մասնավորապես, հայր Եանիցկին մեզ հետ զրույցի ժամանակ ասաց. «*Շուրջ քսան տարի առաջ ինձ այստեղ ուղարկեց կարդինալը, քանի որ հայ ժողովուրդն այս կողմերում չուներ եպիսկոպոսներ, վարդապետներ: Կային, իհարկե սփյուռքահայ կաթոլիկ քահանաներ, բայց իրավունք չունեին այստեղ գալու: Այն ժամանակ դա բավական դժվար հարց էր: Ես եկեղեցական արարողությունները սկսեցի կատարել լատինական ծեսով, հետո իրավունք խնդրեցի ընթերցումները կատարել հայերենով, և դրանից հետո պատարագները կատարվեցին հայկական ծեսով՝ գրաբարով, ինչպես որ առաքելական հայերի մոտ: Մինչև այսօր էլ ծեսերը, խորհուրդները կատարվում են հայկական ծեսով*»: Հավելենք, որ յուրա-

քանչյուր գյուղում շաբաթ և կիրակի օրերին պատարագները մատուցվում են հայերեն, իսկ եկեղեցի այցելողների թիվը զգալիորեն ավելացել է:

ԽՍՀՄ ժամանակաշրջանի հոգևոր մեկուսացումը մարդկանց որոշ չափով կտրել էր կրոնական արարողությունների ինստիտուտից, բայց, ինչպես տեսնում ենք, այդ պարտադրված բացթողումը վերականգնվում և դանդաղորեն հաստատուն տեղ է գտնում համայնքի կյանքում, և կապվածությունը Հայ կաթոլիկ եկեղեցուն ավելի է մեծանում:

Կազմակերպչական հարցերում պակաս կարևոր չէ Հեշտիայի Աստվածամոր անարատ յղութեան հայ քույրերի միաբանութեան դերը, որը մարդասիրական գործունեություն է իրականացնում, ընդ որում՝ նաև Հայաստանի Հանրապետությունում: Մասնավորապես, մի քանի տարի է՝ Հեշտիայում կազմակերպում են մանկապատանեկան ամառային («Կարդինալ Աղաջանյան») ճամբարներ, որոնց ներգրավվում են տեղի, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնությունից և Հայաստանի Հանրապետությունից հրավիրված պատանիներ: Այս միաբանության քույրերն ուսումնական ծրագրեր են իրականացնում կրոնի, բարոյագիտության, երգի, արվեստի և այլ ոլորտներում: Տուրցխ գյուղում գործում է նաև «Սալեզեան քոյրերի» մանուկների կենտրոնը (մանկապարտեզ):

Ախալքալաքի շրջանում կաթոլիկ եկեղեցիները վերանորոգվում են: Աշխատանքների մեծ մասը կատարվում է բարեբարների կողմից, դրամական օժանդակություններ են լինում նաև արտերկրից, հատկապես Գերմանիայից: Որևէ օժանդակություն չի ցուցաբերվում Վրաստանի Հանրապետության կող-

մից: Կան համայնքներ, որոնք եկեղեցիներ չունեն, օրինակ՝ Կաթնատու գյուղում, որտեղ համատեղ ապրում են թե՛ կաթոլիկ, թե՛ առաքելական հայեր, ընդ որում՝ եկեղեցի չունեն նաև վերջիններս: Նույն իրավիճակում են Ափարա, Նոր Խուլգումո (Տամբովկա) գյուղերը:

Վատթար վիճակում են հատկապես Նինոծմինդայի Ուջմանա և Թորիա գյուղերի եկեղեցիները. ինչպես ասում է հայր Անտոնը, ցանկություն կա քանդել Ուջմանայի եկեղեցին և տեղում նորը հիմնել, բայց դեռևս ֆինանսական դժվարություններ կան:

Անվտանգության նկատառումներից ելնելով՝ կաթոլիկ եկեղեցիների դռները միշտ փակ են, օրինակ՝ Վարևան գյուղի վրացական եկեղեցու դռները բաց են, թեև սույն գյուղում ընդամենը մեկ վրացական ընտանիք է մնացել (այստեղ երևում է Վրաց ուղղափառ եկեղեցու գերակայությունը):

Վերջին տարիներին Վրաստանում, Հայ Առաքելական եկեղեցիների հանդեպ իշխանությունների հովանու ներքո թույլ տրվող ապօրինությունները տեղեկատվական դաշտում առանձնակի քննարկման թեմա են դարձել: Այս համատեքստում հայ կաթոլիկ համայնքների ներքին մարտահրավերները հետին պլան են մղվում: Հայ կաթոլիկ եկեղեցիների դեմ ոտնձգությունների պատճառով վերջին տասնամյակում տուժել են Ուջմանա և Ալաստան գյուղերի եկեղեցիները:

Մասնավորապես, Ուջմանա գյուղի եկեղեցուց անհետացել է Մարիամ Աստվածածնի՝ մշակութային արժեք ներկայացնող գիպսե արձանը (18-րդ դար), որը մինչև օրս չի հայտնաբերվել: Իսկ Ալաստան գյուղի եկեղեցում դիտավորյալ «մաքրվել» է

մկրտարանի ավազանի հայերեն արձանագրության մի մասը: Անտոն քահանան կարծում է, որ նման երևույթները միայն համայնավարական տարիներին կարող էին տեղի ունենալ: Նման գործողությունները մշտապես կոծկվում են և հրապարակայնորեն չեն քննադատվում:

Վերջին մեկ-երկու տարում հիմնավորապես վերանորոգվել են Ալաստանի, Վարևանի և մասամբ Խուլգումոյի եկեղեցիները: Մասնավորապես, Ալաստանի եկեղեցին վերանորոգվել է 2008-2009թթ. գյուղի՝ արտերկրում աշխատող երիտասարդության և Գերմանիայից հանգանակված գումարներով: Այդ աշխատանքներին հետևելու նպատակով 2008թ. հուլիսի 30-ին անակնկալ գյուղ այցելեց Հայ կաթոլիկ եկեղեցու առաջնորդ Տեր Ներսես Պետրոս ԺԹ. կաթողիկոս պատրիարքը: Այդ այցելությունը պատմական բացառիկ իրադարձություն էր. առաջին անգամ էր այս մակարդակի հոգևորականն այցելում Վրաստանի հայ կաթոլիկների համայնք: Հայ կաթոլիկների Արևելաեվրոպական թեմի (կենտրոնը՝ Գյումրի) առաջնորդ Հայր Նշան արք. Կարաքեհեյանի և այլոց ուղեկցությամբ պատրիարքը շրջագայել է տասնչորս հայկական կաթոլիկ գյուղերով՝ հընթացս ծանոթանալով տեղացիների խնդիրներին և հոգսերին, պատարագներ մատուցել գրեթե յուրաքանչյուր գյուղում[1]:

Հայ կաթոլիկ պատրիարքարանի և գյուղական համայնքների կապը բավական սերտ է: Ամառային ճամբարներն առավել արդյունավետ անցկացնելու համար պատրիարքը նյութական զգալի օժանդակություն է ցուցաբերում: Այս համայնքներին օգնում են նաև Անարատ յղութեան հայ քույրերի միաբանու-

[1] Մասիս, 2008, օգոստոս, թիվ 35, էջ 21:

թիւնը (կենտրոնը՝ Հռոմ)[1], Զմմառի Արծիվյան միաբանության առաջնորդ Միքայել Մուրադյանը (Լիբանան), Հայաստանի Հանրապետության Գյումրի քաղաքի «Տիրամայր Հայաստան» կենտրոնը, շրջկենտրոնի ղեկավարները: Դպրոցներին օգնում են նաև ՀՕՄ-ը և առանձին ձեռներեցներ:

Ավարտելով հայ կաթոլիկների ներկայիս հոգևոր-եկեղեցական խնդիրների թեման՝ փաստենք, որ գրեթե բոլոր եկեղեցիները գործում են, պատարագները մատուցվում են հայկական ծեսով, ինչը շատ կարևոր է: Վերանորոգման կարիք ունի հատկապես Ուջմանա գյուղի եկեղեցին, որի զանգակատունը վթարային վիճակում է և կարող է փլվել: Վերանորոգման կարիք ունի նաև Թորիա գյուղի եկեղեցին, որի պատերը խոնավությունից քայքայվել են: Մնացած եկեղեցիներն անհամեմատ լավ վիճակում են:

[1] Միաբանությունը ղեկավարում է Մեծավորուհի մայր Եվդոքսիա Քեշիշյանը:

## *Ամփոփում*

- Ջավախքում Հայ Առաքելական եկեղեցու ազգապահպան հովանուն համահունչ նպաստավոր գործունեություն է իրականացնում նաև Հայ կաթոլիկ եկեղեցին, և նրանց միջև ներկա հարաբերությունները դրական և արդյունավետ լիցք են հաղորդում երկրամասի հայ բնակչությանը:
- Ջավախքի առաքելադավան հայերի հետ հայ կաթոլիկներն ամբողջապես ներգրավված են Հայության խնդիրներում՝ ակտիվ մասնակից դառնալով համահայկական նշանակության միջոցառումներին:
- Խորհրդային Միության փլուզումից հետո Ջավախքի հայ կաթոլիկների հոգևոր վերելքի համար նշանակալի ավանդ ունեցավ Հայ կաթոլիկ եկեղեցին, որն, անշուշտ, առաջին իսկ հնարավորության դեպքում սեփական հովանու տակ վերցրեց իր հետևորդներին: Դրանով նաև հաստատեց իր հոգևոր իշխանության տարածման աշխարհագրական սահմանները՝ միաժամանակ մասնակից դառնալով հայ կաթոլիկների ինչպես հոգևոր-եկեղեցական, այնպես էլ հասարակական կյանքին:
- Թեև խորհրդային շրջանի պարտադրված գաղափարախոսությունը աթեիստական էր, այդուհանդերձ, նկատում ենք, որ Ախալքալաքի և Նինոծմինդայի հայ կաթոլիկներն այդ շրջանում դեռևս պահպանել էին իրենց դիմագիծը: Այն արտահայտվեց ԽՍՀՄ փլուզումից հետո այստեղ ուղարկված կաթոլիկ հոգևորականների հանդեպ ցուցաբերած վերաբերմունքով: Ավելի քան յոթանասուն տարի հոգևորա-

կանությունից զուրկ տեղացիները և հատկապես հաջորդ սերունդները, ովքեր կրոնից բավական հեռու էին կանգնած, բացասական վերաբերմունք չցուցաբերեցին իրենց համար խորթ, օտարազգի քահանաներին:

- Սպասվում է, որ դեռ երկար ժամանակ յուրաքանչյուր գյուղական համայնք չի կարող ունենալ գոնե մեկ հոգևորական և այդպիսի մի քանի համայնքի սպասարկում է ընդամենը երեք հոգի, ինչը խիստ բացասաբար է ընդունվում հայերի կողմից: Քանի որ մարդկային սահմանափակ ռեսուրսներ ունեցող Հայ կաթոլիկ եկեղեցին, իր հերթին, չի կարողանում ապահովել հոգևորականներով, իսկ գյուղերի երիտասարդները չեն ցանկանում վարել հոգևոր կյանք, շատ անգամ այդ դերն իր վրա է վերցնում Վատիկանը, որն այլազգի հոգևորականներ է գործուղում: Դրանից էլ առաջանում է հայկական և արևմտյան ազդեցությունների հանգամանքը:
- Ցավոք, արտագաղթը նվազեցնում է համայնքի մարդկանց թվաքանակը, և դրա կասեցման համար ոչինչ չեն կարող անել ո՛չ Վատիկանը, ո՛չ էլ Հայ կաթոլիկ եկեղեցին: Դա Ջավախքի համար համընդհանուր և ամենաիրատապ խնդիրներից է, որն ունի խորքային պատճառներ: Անմխիթար վիճակում է դպրոցների մեծ մասը, մշակութային միջոցառումների համար նախատեսված ակումբները՝ ի տարբերություն խորհրդային ժամանակների, այլևս չունեն իրենց նախկին դերակատարումը:
- Ստացվում է, որ Ռուսաստանի Դաշնության մի շարք քաղաքներում, հատկապես Սանկտ Պետերբուրգում, Մոսկ-

վայում, Սամարայում և այլ վայերում բավական լավ կազմակերպված հայ կաթոլիկ համայնքների համալրումն ու գոյատևումը որոշ չափով պայմանավորված է վերջիններիս ցավալի արտագաղթով:

- Սակայն բոլոր խնդիրներով հանդերձ՝ Ջավախքի հայ կաթոլիկ համայնքները բավական կենսունակ են: Այս բոլոր գյուղերը դեռ պահպանել են իրենց հայկական դիմագիծն ի հաշիվ հայկական շրջապատի: Դրանում, անխոս, մեծ է եղել նաև Մխիթարյանների դերը, ովքեր ժամանակին իրենց հայեցի դաստիարակությամբ զերծ պահեցին նրանց օտար ազդեցություններից՝ պահպանելով նրանց ազգային ինքնագիտակցությունը:
- Ուսումնասիրության մեծ կարիք ունի վրացացած հայ կաթոլիկների թեման, ընդ որում՝ տարբեր տեսանկյուններից՝ պատմական, էթնոհոգեբանական և այլն: Սույն խնդրի խորքային ուսումնասիրությունը հայ հետազոտողներից պահանջում է հստակ ռազմավարություն: Ի վերջո, սեփական ինքնությունը կորցրած ցանկացած խումբ ունի թույլ կետեր, որոնց միջոցով հնարավոր կլինի պարզել սեփական արմատներին վերադառնալու առավելագույն ցուցիչը: Այս հարցը կապված է նաև մի շարք գործոնների հետ. Վրաստանի ներսում տեղի ունեցող նմանատիպ էթնիկ հարցերը ներկայացվում են բացառապես վրացերենով, որպեսզի ուրիշներն իրենց խնդիրներին հաղորդակից չդառնան: Վրաց «հետազոտող փորձագետները», քաղաքական պատվեր կատարելով, հայ կաթոլիկներին ներկայացնում են որպես վրացիներ:

- Տարբեր երկրներում հիմնված հայ կաթոլիկ համայնքների ներկայիս վիճակն ուսումնասիրության կարիք ունի: Գրեթե բոլոր համայնքներում ազգային ինքնության կորստի խնդիր կա: Պետք է փորձել որոնել այս համայնքները պահպանելու միջոցներ և ուղղություններ: Մոտեցումները պետք է հստակեցվեն ըստ էության, հաշվի առնելով, որ դրանցից յուրաքանչյուրն ապրում է տարբեր մշակույթներով ձևավորված արժեհամակարգերում: Այս համայնքներում տեղի ունեցող տարաբնույթ գործընթացների մասին պատկերացումները բավական աղոտ են, և դրա հիմնական պատճառը տեղեկատվության բացակայությունն է:

*Հավելված 1*

## Սամցխե-Ջավախքի հայ կաթոլիկ համայնքները

| Շրջան | Քաղաք, գյուղ |
|---|---|
| Ախալքալաքի շրջան | Ախալքալաք քաղաք (շրջանի գյուղերից տեղափոխված հայ կաթոլիկներ) |
| | Ալաստան |
| | Տուրցխ |
| | Վարևան |
| | Բավրա |
| | Խուլգումո |
| | Կարտիկամ |
| Նինոծմինդայի (նախկին Բոգդանովկա) շրջան | Հեշտիա |
| | Ժդանովական |
| | Թորիա |
| | Ուջմանա |
| | Ասփարա |
| | Նոր Խուլգումո |
| | Կաթնատու |
| Ախալցխայի շրջան | Սուխլիս |
| | Ղուլալիս |
| | Ծղալթբիլա |
| | Ծինուբան |
| | Մոխրեբ |
| | Աբաթխև |
| | Ջուլղա |

*Հավելված 2*

## Վրաստանի օտարացած հայ կաթոլիկ համայնքները[1]

| Շրջան | Պատճառը |
|---|---|
| Ախալցխայի շրջան | |
| Ախալցխա (հին քաղաք) | վրացացել են |
| Իվլիտա | վրացացել են |
| Սածել | մահմեդականացել են 18-րդ դարում |
| Վալե | վրացացել են |
| Ադիգենի շրջան | |
| Աբասթուման | վրացացել են |
| Արալ | վրացացել են |
| Բոլաջուր | վրացացել են |
| Ուդե | վրացացել են |
| Ասպինձայի շրջան | |
| Բնելա | վրացացել են, գյուղը դատարկվել է |
| Խզաբավրա | վրացացել են |
| Խրթվիս | ցրվել են 1828-29թթ. |
| Վարզավ | վրացացել են |
| Գորիի շրջան | |
| Սկրա | վրացացել են |
| Թելավի շրջան | |
| Սանավարդո | վրացացել են |

[1] Տե՛ս *Յակոբեան Պ.,* «Հրաւէր ողջմտութեան», Էջմիածին, 1993, էջ 132: Ըստ նույն հեղինակի, բացի հիշյալ համայնքներից Թիֆլիս, Գորի և Քութայիս քաղաքներում վրացացել են ոչ միայն բոլոր հին հայ կաթոլիկները, որոնք լատինածես էին, այլև 1830-ին Կարինից ու շրջակա գյուղերից գաղթած կաթոլիկ հայերի մի մասը (էջ 132, ծանոթագրություն):

*Հավելված 3*

## Վրաստանում և Աբխազիայում բնակվող հայ կաթոլիկներ

| Բնակավայրի անվանումը | Լեզուն և թվաքանակը |
|---|---|
| Թբիլիսի | ռուսախոս և վրացախոս[1] |
| Օզուրգեթի | հայախոս ( Հեշտիա գյուղից տեղափոխվածներ) |
| Փոթի | 45-50 հոգի |
| Գորի քաղաք | մոտավորապես 100 հոգի (լատինածես) զրթե վրացացած |
| Աջարիայի ԻՀ<br>Բաթում քաղաք | ռուսախոս (Արդահանից, Արդվինից տեղափոխված հայ կաթոլիկներ) և հայախոս (Սամցխե- Ջավախքից տեղափոխված), տարբեր տվյալներով՝ կազմում են մոտ 2000 մարդ |
| Աբխազիա<br>Սուխում քաղաք | հայախոս և ռուսախոս, մոտ 150 հոգի[2] |

[1] Ըստ Հեշտիայի քահանա Անտոնի՝ Թբիլիսիում հայ կաթոլիկները բավական մեծաթիվ են: Նրանք փորձում են ծպտյալ մնալ, որոշ մասը հաճախում է Լատին եկեղեցի, որտեղ հայերենով ընթերցումներ չկան: Միայն վերջին տարիներին է, որ Թբիլիսիի հայ կաթոլիկների նախկին առաջնորդ Տապաղյանի ջանքերով կատարվում էին նաև հայերեն արարողություններ:

[2] *Индира Барциц,* Абхазские католики готовятся к празднованию Рождества Христова, 24/12/2008,http://www.newsgeorgia. ru/ human factor/20081224/151075847.html

*Հավելված 4*

## Հայ կաթոլիկներն աշխարհում[1]

| Թեմեր | 1990թ. | 2000թ. | 2005թ. | 2007թ. | 2008թ. |
|---|---|---|---|---|---|
| Պատրիարքարան, Բեյրութ, Լիբանան | 15,000 | 12,000 | 10,000 | 12,000 | 12,000 |
| Սպահանի եպիսկոպոսություն, Իրան | 2200 | 2200 | 10,000 | 10,000 | 10,000 |
| Բաղդադի եպիսկոպոսություն, Իրաք | 2200 | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| Ալեքսանդրիայի եպիսկոպոսություն, Եգիպտոս | 1500 | 1287 | 1276 | 6000 | 6000 |
| Հալեպի արքեպիսկոպոսություն, Սիրիա | 15,000 | 17,000 | 17,000 | 17,000 | 17,500 |
| Կամիշլիի եպիսկոպոսություն, Սիրիա | 4303 | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| Դամասկոս, պատրիարքական էքզարքություն, Սիրիա | 4000 | 4000 | 4500 | 4500 | 4500 |
| Ստամբուլի արքեպիսկոպոսություն, Թուրքիա | 3700 | 3680 | 3670 | 3640 | 3650 |
| Աման, Երուսաղեմի պատրիարքական փոխանորդություն | --- | 280 | 740 | 800 | 800 |
| Լվովի եպիսկոպոսություն, Ուկրաինա | --- | --- | --- | 0 | 0 |
| Փարիզի Սուրբ խաչ եպիսկոպոսություն, Ֆրանսիա | 30,000 | 30,000 | 30,000 | 30,000 | 30,000 |
| Աթենքի օրդինարիատ, Հունաստան | 650 | 600 | 400 | 400 | 350 |

[1] *The Eastern Catholic Churches 2008, Source:Annuario Pontificio, The Armenian Catholic Church Patriarchat*, http://www.cnewa.org/source-images/Roberson-eastcath-statistics/eastcatholic-stat08.pdf

| Թեմեր | 1990թ. | 2000թ. | 2005թ. | 2007թ. | 2008թ. |
|---|---|---|---|---|---|
| Լատինական Ամերիկայի և Մեքսիկայի Առաքելական եպիսկոպոսություն | 30,000 | 12,000 | 12,000 | 12,000 | 12,000 |
| Բուենոս Այրեսի Սբ. Գրիգոր Նարեկացու եպիսկոպոսություն, Արգենտինա | --- | 16,000 | 16,000 | 16,000 | 16,000 |
| Գեռլայի օրդինարիատ, Ռումինիա | --- | 1000 | 515 | 842 | 806 |
| Նյու Յորքի եպիսկոպոսություն, ԱՄՆ և Կանադա | 34,000 | 36,000 | 36,000 | 36,000 | 36,000 |
| Արևելաեվրոպական թեմ, Գյումրի | --- | 220,000 | 220,000 | 220,000 | 390,000 |
| **Ընդհանուր**[1] | 142,853 | 362,047 | 368,101 | 375,182 | 539,806 |

[1] Այստեղ ներկայացված չէ Ավստրալիայի հայ կաթոլիկ համայնքը՝ մոտ 1000 մարդ։ Աղյուսակում տեղ չեն գտել նաև Ավստրիայի, Շվեդիայի (150 ընտանիք), Իտալիայի (Հռոմի հայ կաթողիկե համայնք), Հունգարիայի փոքրաթիվ հայ կաթոլիկ համայնքների տվյալները։

# ՋԱՎԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

*Վահրամ Հովյան*

Տեղեկատվությունը քաղաքական գործընթացների անբաժանելի բաղադրիչն է: Տեղեկատվական հոսքերն արտացոլում են պետությունների, կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և այլ քաղաքական սուբյեկտների դիրքորոշումներն այս կամ այն խնդրի վերաբերյալ, ազդում հասարակական կարծիքի ու տրամադրությունների ձևավորման վրա, կողմնորոշում հանրությունների վարքը:

Հայաստանի հյուսիսային սահմաններին հարակից, հայաշատ բնակչությամբ պատմական Ջավախքն այսօր մեր տարածաշրջանի կարևոր քաղաքական գործոններից է: Նրա նկատմամբ հետաքրքրություն են ցուցաբերում ոչ միայն Վրաստանն ու Հայաստանը (ՀՀ և ԼՂՀ), այլև Ռուսաստանը, ԱՄՆ-ը, ԵՄ-ը, Թուրքիան ու Ադրբեջանը: Նշված բոլոր երկրների քաղաքական հետաքրքրությունները դրսևորվում են նաև տեղեկատվական գործընթացներում: Այս երկրների քաղաքական հարաբերությունների պատճառով Ջավախքը հայտնվել է տեղեկատվական հոսքերի բախման տիրույթում: Հատկապես 2008թ. օգոստոսյան պատերազմի հետ կապված՝ Վրաստանի և Ռուսաստանի միջև սրված հարաբերությունների արդյունքում ջավախքյան խնդիրները դարձան կողմերի միջև միմյանց լրացուցիչ մեղադրանք-

ների ներկայացման առարկա: Իսկ ադրբեջանական ինֆոգործողությունները Ջավախքին անդրադառնում են ընդհանուր հակահայկական քարոզչական քաղաքականության համատեքստում՝ սրելով, շահարկելով առկա խնդիրները, լարվածություն հաղորդելով հայ-վրացական հարաբերություններին և սպառնալով ոչ միայն Ջավախքի, այլև Հայության և Հայաստանի անվտանգությանը:

Նշենք, որ Ջավախքի տեղեկատվական անվտանգության հիմնահարցերը և տարբեր սուբյեկտների կողմից նրա նկատմամբ իրականացվող տեղեկատվական քաղաքականությունը մինչև այժմ լուրջ ուսումնասիրության չեն ենթարկվել հայկական փորձագիտական հանրության կողմից: Մինչդեռ այդ խնդիրների ուսումնասիրությունը կօգնի հասկանալու Ջավախքի շուրջ ծավալվող գործընթացների տրամաբանությունն ու օրինաչափությունները: Այս հետազոտությունը փորձ է թեկուզ մասնակիորեն լրացնելու այդ բացը՝ հաշվի առնելով այն, որ Ջավախքի տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրներն այնքան բարդ են ու բազմակողմանի, որ մեկ աշխատության շրջանակներում հնարավոր չէ պատասխան տալ բոլոր հարցերին:

Այստեղ ներկայացվում են վրացական մոտեցումները Ջավախքի նկատմամբ տարվող տեղեկատվական քաղաքականությունում: Ուսումնասիրության հիմքում ընկած են վրացական էլեկտրոնային լրատվամիջոցների հրապարակումների մոնիթորինգն ու վերլուծությունը:

## *Վրացական տեղեկատվական հոսքերը*

Ջավախքի շուրջ վրացական տեղեկատվական գործընթացներն ունեն իրենց առանձնահատկությունները, որոնցով տարբերակված մոտեցում է ցուցաբերվում երկրի վարչական տարածքում գտնվող այլ երկրամասերի համեմատ: Բնականաբար, այս մոտեցումների ձևավորման համար առաջնահերթ է հայկական բնակչության մեծամասնության գործոնը: Ըստ էության, Ջավախքի շուրջ վրացական տեղեկատվական քաղաքականությունը, առաջին հերթին ջավախահայության, ուրեմն և Հայության նկատմամբ տարվող քաղաքականություն է: Սակայն, մյուս կողմից, Ջավախքի առնչությամբ վրացական տեղեկատվական հոսքերն արտահայտում են Ռուսաստանի դեմ տարվող քարոզարշավները: Հետևաբար, Ջավախքի նկատմամբ վրացական տեղեկատվական քաղաքականությունը բազմաշերտ է, բազմավեկտոր և տարբեր նպատակներ է հետապնդում:

Ընդհանուր առմամբ դիտարկելով վրացական աղբյուրների վարքը՝ նկատում ենք, որ Ջավախքի նկատմամբ վրացական տեղեկատվական քաղաքականությունը հիմնականում 4 համատեքստ է պարունակում՝

1. Ջավախքի խնդիրների ամբողջական կամ մասնակի անտեսման
2. վրացական հակահայ ազգայնականության
3. հակառուսականության
4. Վրաստանի հետ Ջավախքի ինտեգրման:

1. Ջավախքի խնդիրների անտեսման համատեքստը դրսևորվում է նրանում, որ վրացական տեղեկատվական դաշ-

տում հայկական (այդ թվում նաև՝ Ջավախքի) թեմաներն առաջնայնություն չունեն և շատ ավելի հազվադեպ են հանդիպում՝ ակնհայտ գերակշռություն ունեցող աբխազական, օսական, ռուսական, ինչպես նաև ներքաղաքական թեմաների համեմատ: Համեմատության համար նշենք, որ ադրբեջանական տեղեկատվական դաշտում հայկական, ասել է թե՝ հակահայկական թեմաները գերակշռում են՝ զբաղեցնելով առաջնային դիրք: Սա, մի կողմից, Վրաստանում Ջավախքի խնդրի առաջնահերթության աստիճանն է ցույց տալիս, մյուս կողմից՝ մատնանշում է ջավախքյան խնդիրները որոշակիորեն շրջանցելու, խլացնելու վրացական կողմի քայլերը:

2. Եթե անտեսման հիմնական մեխանիզմը լռությունն է կամ խնդիրների քողարկումը, ապա վրացական ազգայնականության մեխանիզմը Ջավախքում հայկական ազգայնականության երանգավորված շեշտադրումն է: Վրացական լրատվամիջոցների այսպիսի հակահայ բովանդակությամբ հրապարակումներում Ջավախքը ներկայացվում է որպես անջատականության օջախ, որտեղ տիրում է հայկական էթնիկ ազգայնականությունը: Ըստ այդմ՝ Ջավախքում և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձությունները մեկնաբանվում են հենց այդ լույսի ներքո:

Բնականաբար, վրացական ազգայնականությունը հաճախ ներառում է Վրաստանի ներքաղաքական հարաբերությունների որոշակի շերտեր և նպատակադրումներ, ինչպես նաև ուղեկցվում հակառուսականության վեկտորով: Այսպես, 2008թ. հոկտեմբերի 1-ին *www.newsgeorgia.ru* կայքում հրապարակված «Երևան-Բաթում ճանապարհը կհանգեցնի ան-

ջատականության – Նաթելաշվիլի» նյութը ներկայացնում է Վրաստանի ընդդիմադիր Լեյբորիստական կուսակցության առաջնորդ Շ.Նաթելաշվիլու կարծիքը, ըստ որի՝ Հայաստանի և Վրաստանի նախագահների միջև ձեռք բերված համաձայնությամբ կառուցվելիք Երևան-Բաթում ավտոմայրուղին կարող է հանգեցնել Վրաստանի ևս մեկ հատվածի կորստին (նկատի ունի Սամցխե-Ջավախքը, քանի որ կառուցվելիք ավտոմայրուղին անցնելու է այդտեղով): Նաթելաշվիլին համեմատել է կառուցվելիք ավտոմայրուղին Ռոկյան թունելի հետ, որը Հարավային Օսիան կապում է Ռուսաստանին: Ըստ Նաթելաշվիլու՝ Մ.Սահակաշվիլին փորձում է Վրաստանի համար ստեղծել երկրորդ Ռոկյան թունել և հող նախապատրաստել Վրաստանի ևս մեկ տարածաշրջանում անջատականության համար: Նաթելաշվիլու համոզմամբ՝ շուտով այնտեղ բռնկվելու է բարդ և ահարկու անջատականություն[1]:

Վրացական ազգայնականությունը Ջավախքի շուրջ տեղեկատվական դաշտում երբեմն վերաճում է նաև բացահայտ ազգայնամոլական, հակահումանիստական և իրավական նորմերին հակասող բովանդակությամբ հաղորդագրությունների տարածմանը: Այսպես, դեռևս 2007թ. օգոստոսի 6-ին վրացական *www.apsny.ge* կայքէջը հրապարակել էր «Ընտրության ազատություն» համաղրիմյան հասարակական միավորում վրացական կազմակերպության դիմումը՝ ուղղված Վրաստանի նախագահ Մ.Սահակաշվիլուն և խորհրդարանի նախագահ Ն.Բուրջանաձեին: Ուկրաինայի վրացիները վերոհիշյալ դիմումում պահան-

[1] Дорога Ереван-Батуми приведет к сепаратизму – Нателашвили http://www.newsgeorgia.ru/official_statement/20081001/151010794.html

ջում են Վրաստանի իշխանություններից կտրուկ և վճռական քայլերի դիմել՝ Սամցխե-Ջավախքում «հայկական ազգայնականությանն ու անջատականությանը» վերջ դնելու համար և արմատապես փոխել Սամցխե-Ջավախքի ժողովրդագրական պատկերը՝ այնտեղ հաստատելով վրացի բնակչության մեծամասնություն: Դիմումը նաև կոչ է անում վրաց իշխանություններին փոխել քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ՝ հիշեցնելով, թե ժամանակին Վրաստանն ընդառաջ չի գնացել Հայաստանը տնտեսապես և քաղաքականապես մեկուսացնելու թուրք–ադրբեջանական առաջարկին:

Ինչ վերաբերում է Ջավախքում վերջին շրջանում հայ ակտիվիստների ձերբակալություններին և նրանց նկատմամբ իրականացվող դատական հետապնդումներին, վրացական տեղեկատվությունը, անդրադառնալով դրանց, ձերբակալված հայ գործիչներին պիտակավորում է որպես ազգայնական կամ հանցագործ: Օրինակ՝ *www.apsny.ge* կայքէջը 2008թ. նոյեմբերի 10-ին, անդրադառնալով հայ գործիչների (Գուրգեն Շիրինյան, Վահագն Չախալյան և այլն) դատավարությանը, հրապարակման վերնագրում նրանց անվանում է ազգայնականներ[1]: Իսկ *www.medianews.ge* կայքէջը 2009թ. փետրվարի 24-ի հրապարակման մեջ վկայակոչում է Վրաստանի արտաքին գործերի նախարար Գրիգոլ Վաշաձեին, ըստ որի՝ հունվարի 22-ին ձերբակալված Վրաստանի քաղաքացիները (Գրիգոր Մինասյանը և Սարգիս Հակոբջանյանը) ձերբակալվել են ոչ թե այն պատճառով, որ հայ են, այլ՝ որ կատարել են հանցագործություն[2]:

[1] Начался судебный процесс над армянскими националистами Джавахети http://www.apsny.ge/2008/soc/1226341709.php
[2] *Григол Вашадзе:* В Джавахети политических проблем нет http://www.medianews.ge/rus/news/15758.html

Վրացական լրատվամիջոցներում Ջավախքի մասին հրապարակումների հակահայկական բնույթը դրսևորվում է նաև մեկ այլ հանգամանքով: Վրացական հրապարակումներում նկատվում է ջավախահայությանը որպես տարածաշրջանի բնիկ բնակչություն ներկայացնելուց խուսափելու միտում: Ջավախահայությանն ավելի շուտ ներկայացնում են որպես «հայկական սփյուռք»: Այսպես, օրինակ, *www.newsgeorgia.ru* կայքէջը վերոհիշյալ հրապարակման մեջ, խոսելով Սամցխե-Ջավախքի բնակչության մասին, գրում է հետևյալը. «Սամցխե-Ջավախք տարածաշրջանում (հարավային Վրաստան) կոմպակտ կերպով բնակվում է *հայկական սփյուռք*»[1]: Մեկ այլ վրացական կայքէջ՝ *www.geotimes.ge*-ն, 2007թ. հուլիսյան հրապարակումներից մեկում գրում է. «Սամցխե-Ջավախք և Քվեմո-Քարթլի տարածաշրջաններում կոմպակտ կերպով բնակվում են *հայկական և ադրբեջանական սփյուռքի ներկայացուցիչները*»[2]:

Այնուամենայնիվ, եթե կրկին համեմատելու լինենք վրացական ինֆոքաղաքականությունն ադրբեջանականի հետ, ապա կնկատենք, որ Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականությունը միանշանակ նպատակաուղղված է հակահայկականության տարածմանը, այնինչ նույնը չի կարելի ասել վրացականի մասին, մասնավորապես Ջավախքի մասով:

[1] Дорога Ереван-Батуми приведет к сепаратизму – Нателашвили
http://www.newsgeorgia.ru/official_statement/20081001/151010794.html
[2] Более 80 процентов опрошенных в Самцхе-Джавахети и Квемо Картли считает Грузию родиной – исследование
http://www.geotimes.ge/index.php?m=home&newsid=5486

3. Վրաստանում Ջավախքին առնչվող տեղեկատվական հոսքերը հաճախ առաջնահերթ օգտագործվում են ոչ թե հակահայկականության, այլ Ռուսաստանի դեմ տեղեկատվական պատերազմի համատեքստում: Այլ կերպ ասած, Ջավախքը որպես թեմա է ծառայում Ռուսաստանի դեմ տեղեկատվական պատերազմում: Ըստ այդմ՝ Ռուսաստանը ներկայացվում է որպես ագրեսոր, որի նպատակն է ապակայունացնել և մասնատել Վրաստանը: Այդ նպատակին հասնելու համար, համաձայն վրացական հրապարակումների, Ռուսաստանն օգտագործում է Վրաստանի էթնիկ փոքրամասնություններին: Հետևաբար, Ջավախքում տեղի ունեցող խմորումներն ու ապակայունացման դրսևորումները կապվում են ռուսական հատուկ ծառայությունների գործունեության հետ: Ըստ վրացական տեղեկատվական դաշտում առկա որոշ հրապարակումների՝ Ռուսաստանն է դրդում ջավախքցիներին հանդես գալ ինքնավարության, հայոց լեզվին տարածաշրջանային լեզվի կարգավիճակ տալու և այլ իրավունքների իրացման պահանջներով:

Ջավախքյան գործոնի արծարծումը Ռուսաստանի դեմ քարոզչական պատերազմում ավելի ակնհայտ դարձավ 2008թ. օգոստոսյան պատերազմից հետո: Այսպես, 2008թ. նոյեմբերի 28-ին, ելույթ ունենալով օգոստոսյան դեպքերը հետաքննող խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողովի առաջ, Վրաստանի նախագահ Մ.Սահակաշվիլին Ջավախքի առնչությամբ նշեց, որ պատերազմի ընթացքում ռուսական բարձրաստիճան պաշտոնյաներ էին այցելում Երևան՝ փորձելով համոզել Հայաստանին օգնել իրենց Սամցխե-Ջավախք տարածաշրջանում լարվածություն առաջ բերելու գործում: Սակայն ռուսնե-

րին, ըստ Մ.Սահակաշվիլու, չհաջողվեց դա անել[1]: Վրաստանի նախագահի այս հայտարարությունը լայն արձագանք գտավ վրացական լրատվամիջոցներում:

2009թ. հունվարի վերջին վրացական *www.abkhazeti.info* և *www.medianews.ge* կայքէջերը հրապարակեցին մի նյութ, որտեղ փորձ էր արվում ցույց տալ, թե Ռուսաստանը դրդում է Հայաստանին ռազմական գործողություններ սկսել Վրաստանի դեմ: Ըստ հրապարակված նյութի՝ 2008թ. վերջին Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը հաստատել է, որ Հայաստանը Ռուսաստանից ստացել է մի քանի միլիոն դոլար արժողությամբ զենք, որը նախատեսված չէ Ադրբեջանի դեմ օգտագործման համար: Ինչպես հաղորդում է վերոհիշյալ հրապարակումը, Հայաստանի իշխանությունները ռուսական առաջարկության վերաբերյալ չեն ծավալել ներքին քիչ թե շատ լուրջ քննարկում, բացի այդ, պաշտոնական Երևանը ձեռնպահ է մնում այն ծայրահեղական ուժերի հետ շփումներից, որոնք գործունեություն են ծավալում Ջավախքում:

Հակառուսականության համատեքստում երբեմն շահարկվում են ջավախահայերի տնտեսական կապերը ՌԴ–ի հետ և դրանով իսկ ջավախահայ գործարարներն ու նրանց կողմից հովանավորվող կամ ղեկավարվող կառույցները ներկայացվում են ՌԴ աջակցությունն ունեցող անջատողականների դերում: Այսպես, վերոնշյալ հրապարակման մեջ Սամցխե-Ջավախքում գործող հայկական հասարակական և բարեգործական կազմակեր-

[1] Key points of the Georgian Parliament's Commission hearing on August's war http://georgia2008.net/2008/11/28/english-key-points-of-the-georgian-parliaments-commission-hearing-on-augusts-war/

պությունների առաջնորդների մասին նշվում է, թե նրանց մեծ մասը նախկինում՝ 1990-ական թթ., Ռուսաստանում զբաղվել է բիզնեսով, իսկ 2000թ. գալով Ջավախք՝ սկսել է զբաղվել բարեգործությամբ, նրանցից ոմանք բացել են պարի դպրոցներ, որտեղ, սակայն, հայ երիտասարդներին սովորեցնում են կրակել[1]:

*www.apsny.ge* կայքէջը 2009թ. մարտի սկզբին, անդրադառնալով Երևանում Վրաստանի դեսպանատան առջև տեղի ունեցած ցույցին, վկայակոչում է Վրաստանի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ակակիա Մինաշվիլուն, ըստ որի՝ «մարդկանց որոշակի խումբ ռուսական հատուկ ծառայությունների աջակցությամբ փորձում է ինչ-որ բան հրահրել, սակայն այդ ուղղությամբ որևէ տեղաշարժ չի նկատվում»[2]:

Այս կերպ վրացական կողմը փորձում է տարանջատել Ջավախքի հայության նկատմամբ տարվող տեղեկատվական գրոհները և մեղադրանքները պաշտոնական Երևանից, և ընդհակառակը, դրանք միավորել Ռուսաստանի դեմ տարվող քարոզչությանը:

4. Բացի վերը նշված ուղղություններից, վրացական տեղեկատվական հոսքերում զգալի տեղ ունեն նաև Ջավախքի վերաբերյալ մասնակի ռացիոնալ և կառուցողական մոտեցումները, որոնք հիմնականում վերաբերում են երկրամասի ինտեգրման

[1] Путин предлагает Армении начать войну против Грузии http://abkhazeti.info/news/1233179553.php; http://www.medianews.ge/rus/news/15139.html

[2] Российские службы пытаются что-то безуспешно спровоцировать в Самцхе-Джавахети – депутат http://www.apsny.ge/2009/pol/1236030430.php

խնդրին: Ըստ այդմ՝ վրացական տեղեկատվությունում գերիշխում է այն մտայնությունը, թե Ջավախքի հետ կապված բոլոր հիմնախնդիրները բխում են Վրաստանի շրջանակներում վերջինիս թույլ ինտեգրվածությունից: Այդ կերպ Ջավախքը ներկայացվում է որպես ոչ թե ազգայնականության կամ անջատականության օջախ, այլ Վրաստանի կազմում թույլ ինտեգրված շրջան, ինչից էլ բխեցվում են մյուս հիմնախնդիրները՝ լեզվական, սոցիալ-տնտեսական և այլն: Հետևաբար, Ջավախքի հիմնախնդիրների լուծման բանալին դիտարկվում է Վրաստանի կազմում նրա թույլ ինտեգրվածության հաղթահարման մեջ:

2005թ. դեկտեմբերին *www.apsny.ge* կայքէջում հրապարակվեց «Սամցխե-Ջավախքում չկա անջատողականություն» հոդվածը: Հրապարակման մեջ հաղորդվում է այն մասին, որ Մարդկային ռեսուրսների զարգացման հիմնադրամը ԵԱՀԿ աջակցությամբ Սամցխե-Ջավախք տարածաշրջանում իրականացնում է «Ազգամիջյան հարաբերությունների կառավարումը Սամցխե-Ջավախքում» նախագիծը: Ինչպես հաղորդում է հրապարակումը, մեկ տարվա ինտենսիվ աշխատանքը պարզ ցույց է տալիս, որ «Ջավախքում չկա անջատողականության որևէ նշան, թեև կան հսկայական քանակությամբ խնդիրներ, որոնց լուծումը պետք է իրականանա կառուցողական և քաղաքակիրթ մեթոդներով»[1]:

Վրացական տեղեկատվական քաղաքականությունը փորձում է Ջավախքի թույլ ինտեգրվածության համատեքստում տեղավորել այնտեղ առկա բոլոր, այդ թվում՝ լեզվական–մշակու-

[1] В Самцхе-Джавахети нет сепаратизма
http://www.apsny.ge/analytics/1134006438.php

թային և սոցիալ-տնտեսական խնդիրները: Ըստ վրացական լրատվամիջոցների՝ Ջավախքի տնտեսապես թույլ զարգացածությունը և ցածր կենսամակարդակը բխում են ջավախահայերի վրացերենի չիմացությունից, երկրամասի մեկուսացումից, ինչն էլ, իր հերթին, բխում է ենթակառուցվածքների (ճանապարհներ, գազամատակարարման համակարգ, էլեկտրահամակարգ և այլն) թույլ զարգացածությունից: Վրացական տեղեկատվական դաշտում տարածվում է այն մտայնությունը, թե Վրաստանի իշխանությունները քաջ գիտակցում են Ջավախքի մեկուսացման խնդիրը և անում են հնարավորը՝ այն հաղթահարելու համար: Այս ամենի համատեքստում հատկանշական են վրացական լրատվամիջոցների կողմից մեջբերված Վրաստանի նախագահ Մ.Սաակաշվիլու խոսքերը, որ վերջինս արտասանել է Ախալքալաքում 2006թ. ապրիլին՝ Ախալքալաք-Ախալցխա ճանապարհի շինարարության սկսման արարողության ժամանակ: Վրաստանի նախագահը հայտարարել է, որ ուշ աշնանը կսկսվի նաև Ախալքալաք-Թբիլիսի ավտոճանապարհի շինարարությունը, ապա նշել. «Սա նշանակում է, որ մեկընդմիշտ վերջ կտրվի Ջավախքի աշխարհագրական մեկուսացմանը: Սա նշանակում է, որ գյուղացիները այստեղից կարող են ազատորեն տեղափոխել մթերքը: Սա նշանակում է, որ այստեղ կգա ավելի շատ բիզնես, այստեղ կլինի ավելի շատ տարանցում... Ճանապարհներ և զարգացում՝ սա է գլխավորը, որ այժմ պետք է Ջավախքին»[1]:

[1] *М.Саакашвили:* Строительство новых дорог покончит с изоляцией Джавахети http://www.civil.ge/rus/article.php?id=10618&search=%C4%E6%E0%E2%E0%F5%E5%F2%E8

Այս տիպի տեղեկատվական հոսքերը, թեև քիչ թե շատ դրական դիրքորոշում են ցուցաբերում Ջավախքի և ջավախահայության նկատմամբ, միևնույն է, ամբողջական և լիրաժեք չեն մոտենում երկրամասում առկա խնդիրներին, մասնավորապես՝ անտեսում են ջավախահայության իրավունքների սահմանափակումների հարթությունը: Այնուամենայնիվ, վերջինս թույլ է տալիս կառուցողական մթնոլորտ ձևավորել ոչ միայն տեղեկատվական, այլև քաղաքական դաշտում, պահպանել հայ–վրացական դիվանագիտական, տնտեսական, մշակութային կապերը, ինչը ստեղծում է նաև առկա հիմնախնդիրները խաղաղ և փոխշահավետ տարբերակով լուծելու ռեսուրս:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Արեստակես Սիմավորյան*
ՋԱՎԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՎԱՆԱՆՔԱՅԻՆ ՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ........................................ 3

Առաջաբան ........................................................................................ 3

Պատմական ակնարկ ........................................................................ 5

Ախալքալաքի և Նինոծմինդայի հայ կաթոլիկ գյուղերի մասին ........................................ 23

Արդի իրավիճակը ............................................................................ 32

Հոգևոր-եկեղեցական խնդիրները .................................................. 60

Ամփոփում ........................................................................................ 73

Հավելված 1
Սամցխե-Ջավախքի հայ կաթոլիկ համայնքները ....................... 77

Հավելված 2
Վրաստանի օտարացած հայ կաթոլիկ համայնքները ............... 78

Հավելված 3
Վրաստանում և Աբխազիայում բնակվող հայ կաթոլիկներ ............................................................... 79

Հավելված 4
Հայ կաթոլիկներն աշխարհում ....................................................... 80

*Վահրամ Հովյան*
ՋԱՎԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ............................................................... 82

Վրացական տեղեկատվական հոսքերը ....................................... 84

Արեստակես Սիմավորյան
Վահրամ Հովյան

# ԶԱՎԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

*Գիտական խմբագիր՝*
Էդուարդ Լ.Դանիելյան
(պատմ. գիտ. դոկտոր)

*Տեխնիկական խմբագիրներ՝*
Խոնարհիկ Քարաուղլանյան
Լուսինե Բաղրամյան

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 375106 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ օֆսեթ, ծավալը՝ 6 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 400: Տառատեսակը՝ Sylfaen:
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում: